

Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի 2025-2030 թթ. կառավարման պլանի նախագծի

Ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվություն (լրամշակված տարբերակ)



Նախաձեռնող՝
«Ի ՍԻ Ի Քառքազու» ՍՊԸ

Հունիս 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ	4
1.1 Հիմնադրության փաստաթղթի նպատակը, հիմնավորումը և մոտեցումները	4
1.2. Ջրային ռեսուրսների կառավարման վերաբերյալ հիմնական փաստաթղթերի վերլուծությունը և դրանց կապն այլ առնչվող հիմնադրության փաստաթղթերի հետ.....	5
2. ՌԷԳ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	8
2.1 Տեղեկատվություն նախաձեռնողի մասին.....	8
2.2 Հիմնադրության փաստաթղթի ամփոփ նկարագիրը.....	9
3. ԶՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	10
3.1. Բնական պայմաններ.....	10
Կլիմայի և ռելիեֆի հակիրճ նկարագրություն:	12
Երկրաբանության և հիդրոերկրաբանության նկարագրություն	13
3.2 Ջրագրության նկարագրություն	17
3.2.1 Մակերևության ջրային ռեսուրսները.....	17
Գետեր	17
Լճեր	19
Ջրամբարները.....	20
3.3. Կենսաբազմազանություն	21
3.3.1 Բնության հատուկ պահպանվող տարածքները	21
3.3.2 Պալմամշակության ռեսուրսներ	24
3.4 Բնական աղետների գոտիներ.....	25
4. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ և ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ	25
5. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՆՇՈՒՄՆԵՐԸ և ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՎՐԱ	26
5. 1 Շարժիչ ուժեր	26
5.1.1 Գյուղատնտեսություն	26
5.1.2 Ձկնաբուծություն.....	27
5.1.3 Արդյունաբերություն	27
5.1.4 Զբոսաշրջություն	28
5.1.5 Աղբավայրեր	28
5.1.6 Տրանսպորտ	29
5.1.7 Ապագա ենթակառուցվածքների զարգացում.....	29
5.2 Ճնշումներ և ազդեցություններ	30
5.2.1 Աղտոտման կետային աղբյուրներ.....	30
5.2.2 Աղտոտման ցրված աղբյուրներ.....	32
5.2.3 Քանակական ճնշումներ, ջրառ և ջրամատակարարման ծառայություններ	34

6. ԶՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՊԱՇԱՐՆԵՐ	36
6.1 Օգտագործելի ջրային ռեսուրսներ.....	37
7. ՀԻՄՆԱԴՐՈՒԹԱՅԻՆ ՓԱՏՏԱԹՂԹԻՆ ԱՌՆԶՎՈՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎԱՎԵՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ և ԱՌՆԶՎՈՂ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ	42
7.1 Հիմնադրության փաստաթղթին առնչվող՝ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված կամ ստորագրված միջազգային պայմանագրեր	42
7.2. Իրավական կարգավորումներ	43
8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԶՐԱՎԱԶԱՆԻ ԶՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ	48
9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ	51
10. Միջոցառումների ծրագիր	52
10.1 Հիմնական միջոցառումներ	52
10.2 Լրացուցիչ միջոցառումներ, այդ թվում ֆինանսավորում չպահանջող.....	56
11. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	62
12. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ և ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ	64
12.1 Առաջին հանրային լսումներ	64
12.2 «ՇՄԱԳ և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով և համապատասխան ենթաօրենսդրական ակտերով նախատեսված հանրային լսումներ.....	66

1. ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1.1 Հիմնադրության փաստաթղթի նպատակը, հիմնավորումը և մոտեցումները

Սույն փաստաթղթով ներկայացվում է Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի թարմացված 2025-2030 թթ. կառավարման պլանի նախագծի ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությունը:

Արարատյան ջրավազանային կառավարման տարածքը (այսուհետ՝ Արարատյան ՋՏԿ) համընկնում է Արարատի մարզի Արտաշատի և Արարատի տարածաշրջանների, Վայոց ձորի մարզի և Կոտայքի մարզի Գառնի, Գեղարդ, Գողթ համայնքների տարածքների հետ: Արարատյան ՋԿՏ-ի էկոհամակարգը ունի ռազմավարական կարևորություն և տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, ռեկրեացիոն և հոգևոր արժեք:

Ջրային ռեսուրսները և ջրային էկոհամակարգերը պահպանելու համար անհրաժեշտ է շտապ միջոցներ ձեռնարկել, մասնավորապես ստեղծել ջրավազանի կառավարման արդյունավետ շրջանակ: Ջրային ռեսուրսների կայուն կառավարման հասնելը պահանջում է միջոցառումներ, համակարգային մոտեցում, որը հաշվի է առնում տեխնիկական, բնապահպանական, սոցիալական, տնտեսական և մշակութային խնդիրները:

Ջրավազանային կառավարման պլանն ուղեցուցային փաստաթուղթ է, որն ապահովում է ջրային ռեսուրսների կառավարման ընդհանրական և գլոբալ մոտեցում, հաշվի առնելով՝ տնտեսական, էկոլոգիական և սոցիալական գործոնները, ջրային ռեսուրսների կայուն կառավարման համար անհրաժեշտ միջոցառումների, ռազմավարությունների և քաղաքականության մշակման համար:

Ջրավազանային կառավարման պլանի հիմնական խնդիրներն են՝

- Ջրային ռեսուրսների պահպանությունը,
- Վատթարացված ջրային մարմինների որակական և քանակական կարգավիճակի բարելավումը,
- Ջրային մարմինների վիճակի հետագա վատթարացման կանխումը,
- Կայուն ջրօգտագործման խթանումը:

Այն նպատակ ունի աջակցել ջրային ռեսուրսների կառավարման մարմիններին, ներառյալ Արարատյան ՋՏԿ բաժնին, քաղաքականություն մշակողներին և հանրությանը, ջրային ռեսուրսների ոլորտում որոշումների կայացման գործում: Ջրային ռեսուրսների կառավարման մոտեցումների բարելավումը չափազանց կարևոր է Հայաստանի Հանրապետության համար՝ ստեղծելու ջրային ռեսուրսների հասանելիության հնարավորություններ, միաժամանակ ապահովելով բնապահպանական թողքերը և ջրի որակը՝ քաղցրահամ ջրային ռեսուրսների պահպանության նպատակով:

Ջրավազանային կառավարման պլանի կարևոր մասն են հանդիսանում, ՋԿՏ պլանի նախագծի հանրային խորհրդակցությունները տեղական ինքնակառավարման մարմինների, ջրավազանի տարածքի բնակիչների և այլ շահագրգիռ կողմերի հետ: Այս գործընթացը օգնում է ջրավազանում ջրային ռեսուրսների կառավարման և դրանց հետ կապված այլ խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն հավաքմանը, ապա դրա հիման վրա համապատասխան կերպով ջրօգտագործման փոփոխմանը և միջոցառումների ծրագրի արդիականացմանը:

1.2. Ջրային ռեսուրսների կառավարման վերաբերյալ հիմնական փաստաթղթերի վերլուծությունը և դրանց կապն այլ առնչվող հիմնադրության փաստաթղթերի հետ

Ջրավազանային կառավարման պլանը ջրավազանային կառավարման համապարփակ փաստաթուղթ է, որը նկարագրում է ջրավազանում իրականացվելիք կառավարման և պահպանության գործողությունները:

Համաշխարհային բանկի աջակցությամբ՝ «Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարում» ծրագրի շրջանակներում, 1999-2000 թթ-ներին ձևավորվեց ներկայումս Հայաստանում գործող ջրային ոլորտին առնչվող օրենսդրական դաշտը: Հաշվի առնելով ծրագրի առաջարկությունները՝ 2001թ-ին ՀՀ կառավարությունը նախաձեռնեց երկրի ջրային ոլորտի կառավարման արդիականացմանը նպատակաուղղված ծրագիր, վերանայեց գործող իրավական դաշտը և հստակեցրեց ինստիտուցիոնալ հիմքերը: Այս ամենն ամրագրվեց 2001թ. փետրվարին ՀՀ կառավարության կողմից ընդունված «Հայաստանի ջրային ոլորտի բարեփոխումների հայեցակարգի մասին» թիվ 92 որոշմամբ¹:

Կառավարության վերոհիշյալ հայեցակարգից ելնելով՝ Հայաստանը 2002թ. հունիսի 4-ին ընդունեց նոր Ջրային օրենսգիրք², որը ջրային ոլորտի բարեփոխումների կարևորագույն քայլերից մեկն է:

Ջրային օրենսգիրքը մատնանշում է ջրային ռեսուրսների կառավարման հետագա ուղին՝ միջազգային լավագույն փորձի հիման վրա: Այն հայտարարում է, որ Հայաստանում ջրային ռեսուրսները համարվում են պետական սեփականություն, և ապահովվում օգտագործման և տնօրինման վերահսկումը տնտեսական գործիքների միջոցով, դրանց ջրօգտագործման թույլտվությունների օգտագործմամբ, որոնք պետք է տրվեն և կիրառվեն պետական ջրային կադաստրում ներառված մոնիթորինգի տեղեկությունների հիման վրա:

Ջրային օրենսգրքի կարևոր բարեփոխումներն ամրագրում են ջրային ռեսուրսների ավազանային կառավարման սկզբունքը և հանրային իրազեկման ու մասնակցության կարևորությունը: Ջրային օրենսգիրքը սահմանում է Հայաստանում ջրային ռեսուրսների կառավարման հավասարակշռված մոտեցումը՝ նշելով ջրային ոլորտում պատշաճ կարգավորման, կառավարման և գործառնական ստորաբաժանումների պարտականություններին վերաբերող սկզբունքները: Այն

¹ <https://www.arlis.am/documentview.aspx/Res/DocumentView.aspx?docid=56912>

² <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=71621>

նաև սահմանում է նոր կառավարման մարմիններ, որոնք պետք է իրականացնեն նշված պարտականությունները:

2005 թ-ին ընդունվեց Հայաստանի Հանրապետության «Ջրի ազգային քաղաքականության հիմնարար դրույթների մասին» օրենքը³: Այս փաստաթուղթը սահմանում է ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի ռազմավարական օգտագործման և պահպանության երկարաժամկետ զարգացման հայեցակարգը:

2006 թ-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» օրենքը⁴: Օրենքի ընդհանուր նպատակն է մշակել միջոցառումներ՝ ուղղված բնակչության և տնտեսության կարիքների բավարարմանը, էկոլոգիական կայունության ապահովմանը, ռազմավարական ջրային պաշարի ձևավորմանը, դրա օգտագործմանն ու պահպանությանը:

2011 թ-ին ընդունվել է «Ջրավազանային կառավարման մոդելային պլանի բովանդակությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում⁵: Այն ուրվագծում է ջրավազանային կառավարման պլանի մոդելը և 6 ջրավազանային կառավարման պլանների տեխնիկական բնութագրիչների մշակումը: Որոշումը թարմացվել է 2017 թ. հոկտեմբերի 26-ին: Նշված արձանագրային որոշումը ուժը կորցրած է ճանաչվել և շրջակա միջավայրի նախարարի 2023 թվականի հունվարի 27-ի N26-Ն հրամանով հաստատվել է ջրավազանային կառավարման պլանի բովանդակությունը:

31.03.2016թ.-ին Հայաստանի Հանրապետության Կառավարություն կողմից ընդունվել է Արարատյան ջրավազանային տարածքի 2016-2021 թվականների կառավարման պլանը և արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասի N^o 338-Ն որոշումը⁶: Որոշման հիմնական նպատակն է հավասարակշռել ջրօգտագործողների՝ ներառյալ գյուղատնտեսության, ձկնաբուծության, արդյունաբերության, էներգետիկայի և շրջակա միջավայրի փոխկապակցված հարաբերությունները: Այն նպատակ ունի նաև աջակցելու ջրային ռեսուրսների կառավարման համար պատասխանատու մարմիններին՝ ներառյալ Արարատյան ԶԿՏ-ի ջրային ռեսուրսների կառավարման պետական լիազոր մարմին, վարչական մարմիններին, քաղաքականությամբ զբաղվողներին և հանրությանը՝ ջրային ռեսուրսների ոլորտում որոշումների կայացմանը, ինչը կնպաստի նաև ջրային ռեսուրսների ռացիոնալ և արդյունավետ օգտագործմանը:

Ըստ N^o 338-Ն ՀՀ Կառավարության որոշման⁷ տվյալների՝ Հայաստանի Հանրապետության Արարատյան ԶԿՏ-ն ընդգրկում է՝ Արփայի (Ջահուկ և հարակից այլ փոքր գետակների ավազանների հետ միասին), Վեդիի (Արածոյի գետավազանի հետ միասին) և Ազատի (Ազատի, Ազատ ու Վեդի գետավազանների միջև ընկած տարածքը) գետավազանները:

³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=1784>

⁴ <https://www.irtek.am/views/act.aspx?aid=150170>

⁵ <https://www.irtek.am/views/act.aspx?aid=58519>

⁶ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=104697>

⁷ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=104697>

2017 թ. նոյեմբերի 24-ին Եվրամիությունը և Հայաստանը ստորագրեցին համաձայնագիր՝ ուղղված գործընկերների միջև հարաբերությունների խորացմանը: Եվրոպական միության արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերով գերագույն հանձնակատար Ֆեդերիկա Մոգերինինիի և Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի կողմից ստորագրվել է «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր» (CEPA) փաստաթուղթը⁸: Նոր պայմանագրով Հայաստանը ստանձնեց պարտավորություն՝ օրենսդրությունը հապապատասխանեցնել ԵՄ ակտերին և միջազգային գործիքներին: Ջրի որակի և ռեսուրսների կառավարման ոլորտում այս մոտեցումը ներառում է 5 դիրեկտիվ:

1. Ջրի շրջանակային դիրեկտիվ,
2. Ջրհեղեղների դիրեկտիվ,
3. Քաղաքային կոյուղաջրերի դիրեկտիվ,
4. Խմելու ջրի դիրեկտիվ,
5. Նիտրատների դիրեկտիվ:

Հայաստանի նոր Ջրային օրենսգրքի պատշաճ կիրառումն ապահովելու նպատակով 2002 թ.-ից Հայաստանում ընդունվել են ավելի քան 120 կանոնակարգ և կանոնադրություն, որոնք վերաբերում են ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման ընթացակարգերին, գետավազանային կառավարման թափանցիկությանը և որոշումների կայացման գործընթացում հասարակության մասնակցությանը, տեղեկատվության մատչելիությանը, պետական ջրային կադաստրի ստեղծմանը, ջրային ռեսուրսների մոնիթորինգի ձևավորմանը, անդրսահմանային ջրային ռեսուրսների կառավարմանը, մակերևութային ջրի որակի նոր ստանդարտներին, ջրավազանի կառավարման մոդելի նախագծին և այլն:

Ջրավազանային կառավարման պլանի նախագծում ներկայացված են ոչ միայն ջրային ռեսուրսների հետ կապված իրավական ակտերը, այլև քննարկվում են շրջակա միջավայրի հետ առնչվող այնպիսի համակարգերի այլ կոմպոնենտների կանոնակարգերը, ինչպիսիք են կլիման, ֆլորան, ֆաունան և այլն. սա պայմանավորվորված է նրանով, որ ջրային համակարգը չի կարող առանձին բաղադրիչ համարվել և ուղակի ու/կամ անուղակի կերպով ազդում է շրջակա միջավայրի վրա:

Ըստ ՀՀ Արարատի⁹, Վայոց ձորի¹⁰, Կոտայքի¹¹ մարզերի 2017-2025թ. զարգացման ռազմավարության, մարզերի տարածքային զարգացման գերակայություններն են՝ ժամանակակից արդյունաբերության և զբոսաշրջության խթանումը, գյուղատնտեսության և գյուղական տարածքների արդիականացումը և

⁸ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=124389>

⁹ <http://ararat.mtad.am/files/docs/34573.pdf>

¹⁰ https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2017/07/9_VDZOR-9.pdf

¹¹ <http://kotayk.mtad.am/11/>

բնապահպանությունը, տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացումը, ներդրումները մարդկային կապիտալում և սոցիալական ենթակառուցվածքում, ինչպես նաև տարածքային և տեղական զարգացման կառավարման կարողությունների ամրապնդումը: Նշված նպատակներին զուգահեռ սահմանվում են նաև հորիզոնական նպատակներ, ինչպես օրինակ՝ հավասարությունը և խտրականության բացառումը, շրջակա միջավայրի պահպանությունն ու էներգաարդյունավետությունը, տեղեկատվական հասարակության ստեղծումը և մրցակցության պաշտպանությունը: ՀՀ Արարատի, Վայոց ձորի, Կոտայքի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարության¹² և Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. Տարածքային զարգացման ռազմավարության¹³ հիմնական գերակայություններին: Մարզերի զարգացման ռազմավարությունները կնպաստեն ՀՀ Արարատի, Վայոց ձորի, Կոտայքի մարզերի համայնքներում առկա հիմնախնդիրների լուծմանը:

ՀՀ մարզերի հեռանկարային զարգացման ռազմավարությունները մշակվել են, ի նպաստ, ունենալով՝ համաչափ զարգացող, կայուն, մրցունակ տնտեսությամբ, զբաղվածության բարձր մակարդակով, աղքատության ցածր մակարդակով՝ ծայրահեղ աղքատությունը ամբողջությամբ հաղթահարած մարզեր:

Ջրավազանի տարածքը ընդգրկող տարածաշրջանի համար զարգացման համար առանձնացված են հետևյալ հիմնական ուղղությունները՝

- Բնական պաշարների և ջրային ռեսուրսների ռացիոնալ և կայուն օգտագործում,
- Վերականգնվող էներգետիկայի կիրառություն՝ հիմնված արևային օրերի, ջրային ռեսուրսների և քամու օգտագործման վրա,
- Աղբահանություն և սանիտարական մաքրում,
- Բարձրարժեք գյուղատնտեսություն,
- Ոչ գյուղատնտեսական արդյունաբերություն,
- Քաղաքաշինություն,
- Տրանսպորտ և ենթակառուցվածքներ,
- Հանգիստ և միջազգային զբոսաշրջություն, ներառյալ՝ գյուղական զբոսաշրջություն

2. ՌԷԳ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Տեղեկատվություն նախաձեռնողի մասին

ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի («Հայհիդրոմետ») կողմից, Ասիական զարգացման բանկի աջակցությամբ, մշակվել է «Արարատյան ջրավազանային

¹² <https://www.gov.am/files/docs/1322.pdf>

¹³ <https://www.irtek.am/views/act.aspx?aid=86050>

կառավարման տարածքի համար ջրավազանային կառավարման պլանի»-ի նախագիծը, որն ըստ 03 մայիսի 2023թ-ին ընդունված N ՀՕ-150-Ն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի¹⁴ (այսուհետ՝ «ՇՄԱԳՓ մասին» ՀՀ օրենք) 4-րդ հոդվածով սահմանված հիմնադրությային փաստաթուղթ, նույն օրենքի 5-րդ գլխի 21-րդ հոդվածի, ինչպես նաև ըստ 21 դեկտեմբերի 2023 թվականի «Ռազմավարական էկոլոգիական գնահատման կարգի և ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» ՀՀ Կառավարության N 2294-Ն որոշման¹⁵ համաձայն, ենթակա է ռազմավարական էկոլոգիական գնահատման՝ օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով:

Համաձայն 08.10.2024 թ-ին Ասիական զարգացման բանկի և «Ի ՍԻ Ի Քաուքազուս» ՍՊ ընկերության միջև կնքված պայմանագրի, վերջինս աջակցում է «TA 6754-ARM: Հայաստանում ծրագրերի իրագործման, ծրագրերի պատրաստվածության և երկրի համակարգերի կարողությունների ուժեղացում» ծրագրին «ՀՀ Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի համար ջրավազանային կառավարման պլանի»-ի նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման և փորձաքննական գործընթացի կազմակերպման հարցերում, այդ գործընթացում հանդես գալով, որպես Նախաձեռնող:

Նախաձեռնողի հասցեն է՝ ք. Երևան, Թումանյան 8, 5-րդ հարկ, 504 գրասենյակ:

2.2 Հիմնադրությային փաստաթղթի ամփոփ նկարագիրը

Հաշվետվության մեջ ներկայացվում է Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի 2025-2030 թթ. կառավարման պլանի վերանայված և թարմացված գլուխները:

Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի պլանը թարմացվել է համաձայն ՀՀ Շրջակա միջավայրի նախարարի 27 հունվարի 2023 թվականի N 26-Ն հրամանի «Ջրավազանային կառավարման պլանի բովանդակության հաստատում» բովանդակության:

Ջրավազանային կառավարման տարածքի համար ջրավազանային կառավարման պլանի հիմնական բաղադրիչներն են.

- Ջրավազանային կառավարման տարածքի բնութագրում,
- Ջրավազանային կառավարման տարածքի ջրային հաշվեկշիռ,
- Ջրավազանային կառավարման տարածքի ջրային ռեսուրսներ և պաշարներ
- Ջրավազանային կառավարման տարածքի ջրային մարմինների տարանջատում,
- Էական ճնշումներ և ջրային մարմինների վրա հնարավոր ազդեցություններ,

¹⁴ <https://www.irtek.am/views/act.aspx?aid=156771>

¹⁵ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=187701>

- Գետերի էկոլոգիական թողքի գնահատում,
- Պահպանվող տարածքներ,
- Զրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձեւավորման, ստորերկրյա ջրային ռեսուրսների պահպանման, ջրապահպան գոտիներ, էկոտոն և անօտարելի գոտիներ,
- Հանրային լսումների ամփոփում:

3. ԶՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

3.1. Բնական պայմաններ

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է Ասիա աշխարհամասի արևմտյան մասում, գրավելով Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան հատվածը՝ Կուր և Արաքս գետերի միջին հոսանքների միջգետային տարածքը: Ընդհանուր տարածքն ընկած է հյուսիսային լայնության 38°50' - 41°18' -ի և արևելյան երկայնության 43°27'

- 46°37' -ի միջև: Երկրի 68.7%-ը կազմում են գյուղատնտեսական նշանակության հողերը, 11.2% -ը՝ անտառային, 11.3% -ը՝ հատուկ պահպանվող տարածքների և 8.8% -ը՝ այլ հողերը¹⁶: ՀՀ տարածքի 36.4%-ը լեռներ են, բարձրավանդակներ ու այլ հողեր: ՀՀ տարածքը բաժանված է տասը մարզի և Երևան քաղաքի: ՀՀ ջրավազանային կառավարման տարածքներն են՝ Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Արարատյան, Սևան և Հարավային (*Error! Reference source not found.*): Արարատյան ԶԿՏ-ն ընդգրկում է Արաքս գետի ձախափնյա հատվածը՝ Արփայի



Պատկեր 1. ՀՀ Ջրավազանային կառավարման տարածքներ, ըստ ջրային ռեսուրսների որակի մոնիթորինգի դիսպոզիցիոն քարտեզի

(2318 կմ²՝ Զահուկ և հարակից այլ փոքր գետակների ավազանների հետ միասին), Վեդիի (1118 կմ², Արածոյի գետավազանի հետ միասին) և Ազատի (956 կմ², որի մեջ մտնում է Ազատի գետավազանը՝ 573 կմ² և Ազատ ու Վեդի գետավազանների միջև ընկած տարածքը՝ 383 կմ²) գետավազանները և կազմում է ընդամենը 4382 կմ²¹⁷: Գտնվում է ծովի մակերևույթից՝ 815-ից մինչև 3555 մ բարձրության վրա: Արարատյան ԶԿՏ-ը վարչատարածքային տեսակետից ընդգրկում է ՀՀ Արարատի մարզի Արտաշատի և Արարատի տարածաշրջանները, Վայոց ձորի մարզը և Կոտայքի մարզի Գառնի, Գեղարդ, Գողթ համայնքների տարածքները: Արարատյան ԶԿՏ-ը սահմանակից է արևմուտքից՝ Թուրքիային, հարավից՝ Նախիջևանին, Հյուսիսից՝ Կոտայքի և Գեղարքունիքի, արևելքից՝ Սյունիքի մարզերին: Արարատյան

¹⁶Հատված մարզային տարածքների և Երևանի քաղաքային տարածքի կողմից սրահատված հողային հաշվեկշիռի՝ 2021թ. հունիսի 1-ի դրությամբ:

¹⁷ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=104697>

Արարատում արձանագրված բացարձակ առավելագույն ջերմաստիճանը եղել է 42.6°C: Լեռնային շրջաններում ամառները համեմատաբար զով են՝ միջին ամսական ջերմաստիճաններով 13-18°C (հուլիս-օգոստոս):

Հունվարը տարվա ամենացուրտ ամիսն է: Ազատ, Վեդի և Արփա գետերի ստորին հոսանքներում միջին ջերմաստիճանը հունվարին կազմում է -3-ից -2°C: Արարատյան գոգավորությունում ցուրտ օդի լճացման պատճառով երբեմն դիտվում են ուժեղ սառնամանիքներ, օրինակ՝ 2002 թ. դեկտեմբերի 28-ին Արտաշատում նվազագույն ջերմաստիճանը կազմել է -33.6°C: Լեռնային շրջաններում միջին ջերմաստիճանը հունվարին տատանվում է -9-ից -6°C-ի սահմաններում, իսկ Զերմուկում արձանագրված նվազագույն ջերմաստիճանը կազմել է -30.0°C:

Տարվա ամենաչոր ժամանակահատվածը օգոստոս-սեպտեմբեր ամիսներն են: Ազատ, Վեդի և Արփա գետերի ստորին հոսանքներում այս ամիսներին տեղումների միջին քանակը կազմում է 6-10 մմ: Լեռնային շրջաններում այդ ցուցանիշը մոտ 2-3 անգամ ավելանում է՝ հասնելով 15-30 մմ-ի:

Ամենախոնավ ժամանակահատվածը ապրիլ-մայիս ամիսներն են, երբ ցածրադիր հատվածներում տեղումների միջին քանակը կազմում է 35-60 մմ, իսկ Լեռնային շրջաններում՝ 80-100 մմ:

Ցածրադիր հատվածներում, Ազատ, Վեդի և Արփա գետերի ստորին հոսանքներում, կայուն ձնածածկույթ չի ձևավորվում, մինչդեռ Զերմուկում և Որոտանի լեռնանցքներում այն պահպանվում է ավելի քան չորս ամիս՝ հասնելով 70-100 սմ բարձրության (փետրվարի վերջ-մարտ)¹⁹:

Երկրաբանության և հիդրոերկրաբանության նկարագրություն

Արարատյան ԶԿՏ-ն ընդգրկում է Ազատ, Վեդի և Արփա գետավազանները և Արարատյան գոգավորության հարավ-արևելյան մասը: Այս տարածքը բնութագրվում է գետերի ձևավորման բազմազանությամբ և երկրաբանական կառուցվածքի բարդությամբ: Ազատ և Վեդի գետերը սկիզբ են առնում Գեղամա լեռնաշղթայի հարավ-արևելյան լանջերից, մինչդեռ Արփա գետը ձևավորվում է Վարդենիսի լեռնաշղթայի հարավային մասում:

Գետերի վերին հոսանքներում հիմնականում տարածված են վերին պլիոցեն-չորրորդական հասակի հրաբխային ապարները, որոնք ներկայացված են բազալտներով, անդեզիտներով, դագիտներով և դրանց տարատեսակներով: Միջին հոսանքներում գերակշռում են Կավճի և Էոցենի հրաբխածին և նստվածքային ապարները, որոնք ներառում են պորֆիրիտներ, տուֆոավազաքարեր, տուֆոբրեկչիաններ, կավեր, ավազաքարեր և կրաքարեր: Ստորին հոսանքներում, մասնավորապես լեռնալանջերի ստորոտներում և գետերի մերձափնյա տարածքներում, տարածված են չորրորդական-ժամանակակից ալյուվիալ-պրոլյուվիալ առաջացումները՝ գետաքարեր, խիճ, մանրախիճ, ավազ և կավ:

Արփայի գետավազանում, բացի հրաբխային ապարներից, սահմանափակ տարածքով հանդիպում են նաև ինտրուզիվ ապարներ, ինչպիսիք են

¹⁹ Կլիմայական Տեղեկագիր II մաս՝ Օդի խոնավությունը, մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը, 2011 թ. :

գրանիդիորիտները և մոնցոնիտները: Վեդի և Արփա գետերի ստորին հոսանքների ավազաններում հանդիպում են պալեոզոյան հասակի նստվածքային ապարներ՝ կրաքարեր, ավազաքարեր և թերթաքարեր:

Արարատյան գոգավորության հարավ-արևելյան հատվածը ստրուկտուրային տեսակետից բաժանված է Արտաշատի և Երասխավանի իջվածքների: Արտաշատի իջվածքը հիմնականում կազմված է լճագետային առաջացումներից, որոնք ներառում են խճազլաքարային և կավային շերտերի հերթափոխություն՝ մինչև 490 մ հզորությամբ: Երասխավանի իջվածքը ներկայացված է ավելի բարակ լճագետային նստվածքներով՝ բազալտների առկայությամբ:

Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները նույնպես բարդ են՝ պայմանավորված ինչպես երկրաբանական կառուցվածքով, այնպես էլ լեռնային ապարների լիթոլոգիական կազմով և կլիմայական պայմաններով: Ստորերկրյա ջրերի ձևավորման, շարժման և կուտակման պայմաններից ելնելով՝ առանձնացվում են ջրատար և ջրամերժ մի քանի ստորաբաժանումներ: Օրինակ, այլուվիալ-պրոլյուվիալ նստվածքների ջրատար հորիզոնը տարածված է գետերի միջին և ստորին հոսանքներում՝ ներկայացված լինելով գետազլաքարային, խճային, ավազային և կավային նստվածքներով: Այս հորիզոնների ստորերկրյա ջրերի սնման հիմնական աղբյուրը գետային հոսքերն են, իսկ հորատանցքերի ծախսը կարող է տատանվել 1-8 լ/վ:

Ընդհանուր առմամբ, ստորերկրյա ջրերի հանքայնացումը միջինում կազմում է 0.4-1 գ/լ, իսկ ջերմաստիճանը՝ 7-17°C: Տարբեր ստորաբաժանումներում ջրերի քիմիական կազմը, հանքայնացումը և ծախսի ցուցանիշները զգալիորեն տարբերվում են՝ կախված ապարների ջրաթափանցելիությունից և հիդրավլիկ հատկություններից:

Օդային ավազանի նկարագրություն, աղտոտման աղբյուրներ²⁰

Օդերևութաբանական կայաններ. Արարատյան ԶԿՏ-ում գործում է 7 օդերևութաբանական կայան՝ Արտաշատ, Ուրցաձոր, Արարատ, Անանուն լեռնանցք, Արենի, Ջերմուկ և Որոտանի լեռնանցք (Պատկեր 3): Վերջին 60 տարիների ընթացքում արձանագրվել է զգալի ջերմաստիճանային աճ բոլոր կայաններում՝ 1.2–1.8°C: Աճը դիտվել է տարվա բոլոր եղանակներին. օրինակ, Արտաշատում և Արարատում 1961–2020 թթ. օդի միջին ջերմաստիճանը բարձրացել է գրեթե 2°C-ով: Տեղումների զգալի փոփոխություն չի արձանագրվել: Հարկ է նշել, որ Որոտանի և Անանուն լեռնանցքում արձանագրվել է՝ մոտ 300 մմ-ով և մոտ 100 մմ-ով

²⁰ Աղբյուրը՝ ՀՀ ՇՆՆԱԿՊՈԱԿ

փոփոխություն:



Պատկեր 4 Արարատյան ՋԿՏ-ի օդերևութաբանական կայաններ

Աղյուսակ 1. Արարատյան ՋԿՏ օդերևութաբանական կայաններ

№	Օդ. կայան	Բացարձակ բարձրություն, մ	Կոորդինատներ	
			Հայնություն	Երկայնություն
1.	Արտաշատ	829	39.958611	44.5375
2.	Ուրցաձոր	1064	39.919722	44.827222
3.	Անանուն լ-ցք	2122	39.830556	44.991944
4.	Արարատ	818	39.831389	44.708333
5.	Արենի	1009	39.727222	45.188333
6.	Ջերմուկ	2064	39.833889	45.671111
7.	Որոտանի լեռնանցք	2387	39.693056	45.711667

Օգտագործվել են CCSM4 և METRAS մոդելները, ըստ RCP6.0 և RCP8.5 սցենարների. RCP6.0՝ 2100-ին CO₂՝ 670 ppm և RCP8.5՝ 2100-ին CO₂՝ 936 ppm:

Ջերմաստիճանի շարունակական աճ է սպասվում տարվա բոլոր եղանակներին:

RCP8.5 սցենարով՝ մինչև 2100 թ. Հայաստանում տարեկան միջին ջերմաստիճանը կարող է հասնել 10.2°C, ինչը 4.7°C-ով բարձր է 1961–1990թթ. բազիսային ժամանակահատվածից:

Կանխատեսվում է, որ տեղումների քանակը 2070 թ. -ին՝ հնարավոր է ավելանա 2%-ով:

Որոնվող տարածքը գտնվում է Արարատյան ջրօգտագործման կառավարման տարածքում (ՋԿՏ), որտեղ ներկայումս առկա են բնական և մարդածին ազդեցություններով պայմանավորված օդային ավազանի աղտոտման աղբյուրներ: Տարածքի մերձակա օբյեկտաբանական կայանների տվյալների վերլուծությունը (Արտաշատ, Ուրցաձոր, Արարատ, Անանուն լեռնանցք, Արենի, Ջերմուկ և Որոտանի լեռնանցք) ցույց է տալիս վերջին տասնամյակներում նկատվող ջերմաստիճանի աճ՝ 1.2–1.8°C սահմաններում:

Թեև մթնոլորտային տեղումների միտումը հստակ չէ, տեղումների քանակի պարբերական տատանումներն ազդում են օդում փոշու մակարդակի վրա, հատկապես չոր և քամոտ եղանակների ժամանակ:

Տարածքում առկա են հետևյալ հիմնական օդային աղտոտիչները՝ փոշի (PM₁₀, PM_{2.5}), NO_x (ազոտի օքսիդներ), SO₂ (ծծմբի երկօքսիդ), CO (ածխածնի երկօքսիդ), VOC (հեշտ ցնդող օրգանական միացություններ):

Տարածքում օդային ավազանի վրա ազդեցություն ունեցող հիմնական աղբյուրներն են՝

- Տրանսպորտային միջոցներ. Միջմարզային և տեղական ճանապարհների տրանսպորտային հոսքերը մեծածավալ են: Ճանապարհների վրա տեղի ունեցող շարժն անընդհատ ավելանում է, ինչը նպաստում է CO, NO_x և PM արտանետումների աճին:
- Արդյունաբերություն. Տարածքում կան արդյունաբերական օբյեկտներ, դրանց արտանետումներն ազդեցություն կարող են ունենալ տեղական օդի որակի վրա:
- Գյուղատնտեսություն. Հողի մշակման, այրման և գյուղատնտեսական տեխնիկայի գործածման արդյունքում մթնոլորտ արտանետվում են փոշի, ազոտի միացություններ և այլ աղտոտիչներ:

Բնակավայրեր և տեղական ջեռուցում. Տնային ջեռուցման համակարգերում անորակ վառելիքի օգտագործումը հանգեցնում է PM, CO և VOC արտանետումների աճին, հատկապես՝ ձմեռային շրջանում:

Համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Հիդրոմետ ծառայության կողմից տրամադրված տվյալների և միջազգային չափանիշների (օր.՝ ԵՄ սահմանային արժեքներ, ԱՀԿ ուղեցույցներ), ներկայումս տարածքում արձանագրված օդի աղտոտվածությունը հիմնականում գտնվում է թույլից՝ չափավոր մակարդակի միջակայքում: Բայց որոշ հատվածներում (օրինակ՝ մերձճանապարհային գոտիներում կամ հողատարածքների մշակումից հետո) կարող են դիտվել կարճաժամկետ բարձրացման դեպքեր:

Նախագծում չի նախատեսվում այնպիսի գործողություններ, որոնք կարող են օդային ավազանի աղտոտվածության պատճառ հանդիսանալ:

Մոնիթորինգի համակարգը նպաստում է օդի որակի պարբերական գնահատմանը:

3.2 Զրագրության նկարագրություն

3.2.1 Մակերևութային ջրային ռեսուրսները

Գետեր

Արարատյան ԶԿՏ-ի մակերևութային ջրային ռեսուրսները պատկանում են երեք հիմնական գետի ավազանների՝ Ազատ, Վեդի և Արփա գետավազաններին, որոնք տարբեր նշանակություն ունեն տարածքի համար: Դրանք միմյանցից տարբերանում են հոսքի պարամետրերով, սնման աղբյուրներով, ինչպես նաև սեզոնային փոփոխություններով:

Ազատ գետը ձևավորվում է Գողթ և Յոթնակունք գետերի միախառնման արդյունքում, որոնք սնվում են, համապատասխանաբար, Գեղամա լեռներից և հարակից տարածքներից բերած ջրերով: Գետի երկարությունը կազմում է 40 կմ, իսկ նրա ջրհավաք ավազանի մակերեսը 572 կմ² է, ինչը վկայում է, որ այն զբաղեցնում է տարածքի մեծ մակերես: Ազատ գետը մեծ նշանակություն ունի Արարատյան ԶԿՏ-ում՝ հանդիսանալով բնական ջրային հոսքերից մեկը, որը ապահովում է բավականաչափ ջրային ռեսուրսներ տեղական համայնքների և գյուղատնտեսության համար:

Գետի սնման աղբյուրները հիմնականում ստորերկրյա ջրերն են՝ այդ թվում աղբյուրները, որոնք սնուցում են գետը ամեն տարի տարբեր սեզոններում: Այս աղբյուրներն ապահովում են բնական հոսքի կայունությունը՝ առանց մեծ տատանումների: Տարածաշրջանում նման կայուն հոսքը հնարավորություն է տալիս կանխատեսելու գետի հոսքի մակարդակները՝ հատկապես տեղումների կամ ձնհալի ժամանակ: Ազատ գետը նաև հիանալի օրինակ է ծառայում, այնպիսի գետի, որի բնական ռեժիմը չի ենթարկվում կտրուկ փոփոխությունների (հեղեղումներ կամ երկարատև երաշտներ):

Ազատ գետի միջին տարեկան ելքը, ըստ Ազատ-Գառնի դիտակետի, կազմում է 4.87 մ³/վ, ինչը ցույց է տալիս նրա պարբերական և կայուն ջրառը: Այս ցուցանիշը կարևոր է տարածաշրջանի ջրային ռեսուրսների կառավարման համար, հատկապես գյուղատնտեսական և էկոլոգիական նպատակներով, քանի որ նման հավասարակշռված հոսքը հնարավորություն է տալիս ռեսուրսների արդարացված և արդյունավետ օգտագործման համար:

Վեդի գետը սկիզբ է առնում Գեղամա լեռնաշղթայի Գնդասար լեռան լանջերից, որտեղից այն իր հունով հոսում է դեպի հարավ-արմուտք: Գետի ընդհանուր երկարությունը կազմում է 58 կմ, իսկ նրա ջրհավաք ավազանի մակերեսը՝ 633 կմ²: Գետի վերին և միջին հոսանքներում զառիթափ ու խորը հովիտ է ձևավորվում, որի խորությունը 500-600 մ է: Այս հատվածը ունի էկոլոգիական արժեք, քանի որ այն հանդիսանում է բազմաթիվ բուսատեսակների բնակավայր, որոնք հարմարված են տվյալ լեռնային պայմաններին:

Ուրցաձոր գյուղից հետո գետի հովիտը սկսում է ընդլայնվել՝ դարձնելով գետի միջին հոսանքը ավելի հասանելի և տարբեր՝ օգտագործման համար: Գետի միջին և ստորին հոսանքներում Վեդի գետի ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով՝ ապահովելով հսկայական ջրային ռեսուրսներ հարակից գյուղերի

համար: Գետը իր երկայնքով զգալի դեր ունի Արարատյան տարածաշրջանի գյուղատնտեսության զարգացումն համար:

Վեդի գետի բազմամյա միջին տարեկան ելքը, ըստ Վեդի-Ուրցաձոր դիտակետի, կազմում է 1.81 մ³/վ, ինչը ցույց է տալիս գետի միջին հոսքի մակարդակը: Սա հնարավորություն է տալիս լուրջ ռազմավարություններ մշակել տեղական ջրային ռեսուրսների առավելագույն արդյունավետ օգտագործման համար՝ հատկապես ոռոգման ոլորտում, որը այս տարածաշրջանի համար շարունակում է մնալ կարևորագույնը:

Արփա գետը Արաքսի ջրառատ վտակներից է և սկիզբ է առնում Սյունիքի բարձրավանդակի 3200 մ բարձրությունից: Գետի ընդհանուր երկարությունը 128 կմ է, որի 92 կմ-ը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում, իսկ մնացած մասը՝ Նախիջևանի տարածքում: Արփա գետի ջրավաք ավազանի մակերեսը կազմում է 2630 կմ², որից 2080 կմ²-ը գտնվում է ՀՀ տարածքում:

Գետը հոսում է դեպի հարավ-արևելք-հարավ-արևմուտք և մեծ նշանակություն ունի տարածքի ջրային ռեսուրսների համար: Արփայի խոշոր վտակներն են Եղեգիսը, որը իր Սալիգետ վտակով սնուցում է գետը, Հերիերը և Դարբը: Այս վտակներն ապահովում են Արփա գետի սնման կայունությունն ու հոսքի բնական կարգավորվածությունը:

Արփա գետի ջրային ռեսուրսները օգտագործվում են տարբեր ոլորտներում, հատկանշական է ոռոգման նպատակներով օգտագործումը, ինչը շատ կարևոր է, ինչպես գյուղատնտեսության, այնպես էլ տարածաշրջանային էկոհամակարգի զարգացման և պահպանման համար: Զուրն օգտագործվում է նաև էլեկտրաէներգիա ստանալու համար:

Գետի բազմամյա միջին տարեկան ելքը, ըստ Արփա-Արենի դիտակետի, կազմում է 21.5 մ³/վ, ինչը հաստատում է նրա կարևորությունը նաև տարածքի ջրատեխնիկական լուծումների տրամադրման համար:

3.2.2. Գետերի ընդհանուր բնութագիրը. Արարատյան ԶԿՏ-ի գետերը վերին և միջին հոսանքներում տիպիկ լեռնային են: 2500-3000մ բացարձակ բարձրություններից հոսելով 400-500մ խորության ձորերով և կիրճերով 1300-1400մ նիջերում բեռնաթափվում են Արարատյան դաշտում և իրենց հոսքի շատ փոքր մասն են հասցնում Արաքս գետին: Արարատյան ԶԿՏ-ի գետերի ու դրանց վտակների ձևաչափական հիմնական բնութագրերը բերված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Արարատյան ԶԿՏ-ի 10կմ և ավելի երկարություն ունեցող գետերի հիմնական հիդրոգրաֆիական բնութագրիչները

№	Գետի անվանումը	Ուր թափվում է	Երկարություն կմ	Ջրավաք ավազանի մակերես, կմ ²	Ակունքի նիշը, մ	Գետաբերանի նիշը, մ	Թեքությունը, %
8.	Ազատ	Արաքս	40.0	572	2050	815	31
9.	Վեդի	Արաքս	58.0	633	2720	810	33
10.	Շաղափ	Վեդի	29.0	131.5	2250	1050	53
11.	Խոսրով	Վեդի	17.8	62.9	2938	1150	107
12.	Ցրտուտ	Վեդի	13.0	60.7	2642	1372	98
13.	Արփա	Արաքս	92.0	2080	3200	960	24
14.	Հերիեր	Արփա	28.0	174	3040	1310	62

15.	Վայք	Արփա	19.0	79.3	2790	1265	80
16.	Գոմք	Արփա	21.0	73.3	2800	1305	72
17.	Ջուլ	Արփա	16.0	54.9	2820	1320	94
18.	Թերպ	Արփա	20.0	102.5	2800	1380	75
19.	Ելփին	Արփա	21.0	130	2420	1100	62
20.	Աղավնաձոր	Արփա	14.0	36.2	2450	1020	102
21.	Գլաձոր	Արփա	16.0	29.1	2600	1200	93
22.	Մալիշկա	Արփա	14.0	45.5	2660	1132	109
23.	Եղեգիս	Արփա	47.0	516	3300	1060	48
24.	Սալիգետ	Շատին	21.6	144	3000	1242	81

Լճեր

Արփայի գետավազանի լճերը համեմատաբար մեծ տարածում ունեն հրաբխային ծագման լեռնաշղթաների մերձգագաթային շրջաններում, ուր նրանց առաջացման համար գոյություն ունեն նպաստավոր թե՛ ռելիեֆի ձևաբանական և թե՛ կլիմայական պայմաններ:

Չոբան լիճը գտնվում է Վարդենիսի հրաբխային լեռնավահանի հարավարևելյան լանջին, Արփա գետի ջրհավաք ավազանում, 12 կմ Ջերմուկ քաղաքից դեպի հյուսիս-արևմուտք, Ճաղատսար լեռան (3335 մ) հյուսիսարևելյան մասում՝ 3030 մ բարձրության վրա: Լիճը հոսուն է: Նրա ջրհավաք ավազանի մակերեսը շատ փոքր է, և զբաղեցնում է ընդամենը 0.7 կմ²: Լճի սնումը խառն է: Այն սնվում է հալոցքային, անձրևաջրերի և ստորերկրյա ջրերով: Լճի մակարդակը տարվա ընթացքում քիչ է տատանվում՝ կազմելով ընդամենը 0.3 մ: Դեկտեմբերից լիճը ծածկվում է համատարած սառցածածկով, որը պահպանվում է մինչև մայիս: Լճում կենդանական աշխարհը բացակայում է:

Արտավան (Այլի, Ալագյո) լիճը գտնվում է Արփա գետի ավազանում, Հարթավան գյուղից 2.5 կմ դեպի հյուսիս-արևելք՝ 2225 մ բարձրության վրա: Լճի ջրհավաք ավազանի մակերեսը զբաղեցնում է ընդամենը 1.76 կմ², որի մակերևույթը թույլ ալիքավոր է, և որը չոր հուներով շատ թույլ կերպով մասնատված է: Լճի ափերը մասնատված են: Լճի առավելագույն երկարությունը 288 մ է, լայնությունը՝ 166 մ, հայելու մակերեսը՝ 47.7 հազ. մ², ծավալը՝ 46.3 հազ. մ³, միջին խորությունը՝ 0.97 մ: Լիճը հոսուն է: Լճի սնումը խառն է: Այն սնվում է ստորերկրյա և մակերևութային ջրերով:

Չմեյ լիճը գտնվում է Արփա գետի ավազանում, Մարտիրոս գյուղի շրջակայքում՝ 1995 մ բարձրության վրա: Լճի ջրհավաք ավազանի մակերեսը շատ փոքր է: Այն զբաղեցնում է ընդամենը 0.08 կմ², և կազմված է նստվածքային, դելյուվիալ-պրոլյուվիալ ավազակավային նստվածքներից: Լիճ թափվող և դուրս եկող վտակներ չկան: Ափերը բացի արևելյանից, բարձր չեն, ունեն միջին թեքություն: Հյուսիսային ափը մեղմաթեք է: Ափերը ճահճապատ են, բուսապատ, թույլ մասնատված: Լճի մակարդակը տարվա ընթացքում քիչ է տատանվում: Չմեյի ընթացքում լիճը համատարած սառցակալվում է, որից ազատվում է վաղ գարնանը:

Ամուլսարի լիճը գտնվում է Զանգեզուրի լեռնաշղթայի Ամուլսար գագաթի (2987.9 մ) հյուսիս-արևմտյան լանջի վրա՝ գագաթից 1500 մ դեպի արևմուտք՝ 2503 մ

բարձրության վրա: Լիճը պատկանում է Արփայի վտակ Դարբ գետի ավազանին: Լճի հարավային մասում կառուցվել է մոտ 80 մ երկարություն և 1.5 մ բարձրություն ունեցող պատվար՝ լիճը վերածելով լիճ ջրամբարի: Լճի ջրհավաք ավազանի մակերեսը 1.42 կմ² է, որը համեմատաբար քիչ է մասնատված: Մասնատված են հատկապես լճին հարակցող հատվածները, որտեղով հոսում են լիճը սնող երկու փոքրիկ առվակները: Այստեղ զգալի տեղամասեր ծածկված են քարացրոններով: Լճի պարագծի երկարությունը 423 մ է, երկարությունը՝ 161 մ, միջին լայնությունը՝ 64 մ, միջին խորությունը՝ 1.65 մ, մակերեսը՝ 10,379 մ², իսկ ծավալը՝ 17,090 մ³: Հուլիսից-մարտ ընկած ժամանակահատվածում լճի մակերեսը և ծավալը ապրիլ-հունիս ընկած ժամանակահատվածի համեմատ նվազում է: Խորությունը այստեղ հասնում է 8.0 մ-ի:

Ազատ գետի ավազանը աղքատ է բնական լճերով, հայտնի է միայն **Վիշապալիճը**, այն գտնվում է Գեղարդ գյուղից 9 կմ արևելք, 2750 մ բարձրության վրա, հայելու մակերեսը կազմում է 30,0 հա:

Վեդի գետի ավազանը աղքատ է բնական լճերով, կան 1-3 հա մակերեսով մի քանի լճեր, որոնցից հայտնի է Քանլի (կամ Կանլի) լիճը, այն գտնվում է Ուրցաձոր բնակավայրից 19 կմ դեպի հյուսիսարևելք, բարձրությունը 2375 մ բարձրության վրա, հայելու մակերեսը՝ 3,4 հա:

Ազատ գետային հոսքի տարածաժամանակային անհավասարաչափ բաշխման խնդրի հիմնական լուծումը ջրային ռեսուրսի կոտակումն է և ապա բաշխումը: Գետային հոսքի տարածաժամանակային անհավասարաչափ բաշխման խնդրի լուծման լավագույն եղանակը ջրամբարների կառուցումն է:

Ջրամբարները

Արարատյան ԶԿՏ-ում կան խոշոր և մի շարք փոքր ջրամբարներ: Աղյուսակ 3-ում նշվում են խոշոր ջրամբարների վերաբերյալ նկարագրական ցուցանիշներ:

Ազատի գետավազանում է գտնվում Ազատի ջրամբարը, իսկ Ազատ գետի վերին հոսանքներում՝ Գեղարդալիճ ջրամբարը: Երկու ջրամբարներն էլ ունեն ոռոգման նշանակություն:

Վեդի գետավազանում կառուցվում է Վեդիի ջրամբարը:

Արփայի գետավազանում ներկայիս գործող ջրամբարները օգտագործվում հիմնականում Սևանա լիճ ջրի տեղափոխման, ոռոգման և էներգետիկ նպատակով: Արփա գետի վերին հոսանքներում է գտնվում Կեչուտի ջրամբարը: Արփա գետի աջափնյա վտակ Հեր-Հեր գետի վրա գտնվում է համանուն ջրամբարը, որը գերազանցապես օգտագործվում է հիդրոէներգետիկ նպատակով:

Աղյուսակ 3. Արարատյան ԶԿՏ-ի մի քանի ջրամբարների հիմնական բնութագրիչները

№	Անվանում	Կառուցման տարի	Ընդհանուր ծավալ մլն մ ³	Հայելու մակերես հա	Նշանակություն
1	Ազատ	1976	70,0	285	ոռոգում
2	Գեղարդալիճ	1965	3,10	30,0	ոռոգում
3	Վեդի	2016	25,0		ոռոգում

4	Զանգակատուն	1986	1,4	11	ոռոգում
5	Կեչուտ	1981	25	135	բնապահպանական
6	Հեր-Հեր	1995	26,0	115	ոռոգում

3.3. Կենսաբազմազանություն

Արարատյան ԶԿՏ-ում ընդհանուր առմամբ աճում են ՀՀ բույսերի կարմիր գրքում, որպես վտանգված կամ կրիտիկական վիճակում գտնվող գրանցված 143 բուսատեսակ, որից էնդեմիկ են 18-ը, ինչպես նաև Բնության Պահպանության Միջազգային Միության (ԲՊՄՄ) կարմիր գրքում գրանցված որպես վտանգված կամ կրիտիկական վիճակում գտնվող 8 բուսատեսակ: Այս տարածքում հանդիպում են ՀՀ կենդանիների կարմիր գրքում, որպես վտանգված կամ կրիտիկական վիճակում գտնվող գրանցված, 64 կենդանատեսակ, որից էնդեմիկ են 16-ը, ինչպես նաև ԲՊՄՄ կարմիր գրքում գրանցված, որպես վտանգված կամ կրիտիկական վիճակում գտնվող 7 կենդանատեսակ: Արարատյան ԶԿՏ-ը գտնվում է չվող թռչունների միգրացիոն միջանցքի կարևոր հնգույցներից մեկում:

Արարատյան ԶԿՏ-ը որոշ վտանգված չվող թռչնատեսակների համար հանդիսանում է նաև բնադրավայր: Արարատյան հարթավայրի ջրաճահճային հատվածների չորացումը, եղեգնուտների հրդեհումը և արմատահանումը հանգեցրել է բնադրավայրերի չորացմանը և կերային բազայի աղքատացմանը, ինչը հանգեցնում է այդ տեսակների թվաքանակի փոփոխության բացասական միտումներին:

3.3.1 Բնության հատուկ պահպանվող տարածքները


Արարատյան ԶԿՏ-ում գործում են՝

- 1 պետական արգելոց՝ «Խոսրովի անտառ»,
- 6 արգելավայր՝ «Գողթանի ավազուտներ», «Խոր Վիրապ», «Եղեգնաձոր», «Ջերմուկի ջրաբանական», «Ջերմուկի անտառային» և «Հերիերի նոսրանտառային»:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցը (տարածքը 23 213.5 հա) գտնվում է Խոսրովի անտառի պատմական տարածքի վրա՝ Ազատ, Խոսրով և Վեդի գետերի ավազաններում (Պատկեր 4): Արգելոցը ի սկզբանե Հայոց արքա Խոսրով Բ Կոտակի կողմից 4-րդ դարում (330-338 թթ.) հիմնադրված որսատեղ է: Այս ժամանակահատվածում Խոսրով Կոտակը ձեռնամուխ եղավ կարևոր պետականաշինական և բարեկարգման ծրագրերի: Խոսրովի առաջնային խնդիրներից էր նոր մայրաքաղաքի հիմնադրումը: Արաքս գետի և Մեծամոր վտակի հոսքի փոփոխության հետևանքով խաթարվել էր Արտաշատի ջրամատակարարումը, ինչը հանգեցրել էր կլիմայական և առողջապահական անբարենպաստ պայմանների: Չցանկանալով լքել Այրարատ աշխարհի կենտրոնը, Խոսրով Կոտակը որոշեց նոր մայրաքաղաք հիմնել նույն գավառում՝ Տիկնունի ամրոցի մոտակայքում: Ազատ գետի մերձակայքում կառուցվեցին արքայական պալատներ, որոնք դարձան նորակառույց Դվին մայրաքաղաքի կենտրոնը: Դվինը, որն ըստ Մովսես Խորենացու մեկնաբանության նշանակում է «բլուր» պարսկերեն

լեզվով, դարձավ ճարտարապետական ու քաղաքաշինական գլուխգործոց՝ իր պարիսպներով ու գեղեցիկ կառուցվածքով:

Խոսքով Կոտակի մյուս մեծ նախաձեռնությունը կապված էր շրջակա միջավայրի բարելավման և որսատեղիների ստեղծման հետ: Նոր մայրաքաղաքի և արքայական պալատների համար նա հիմնեց արհեստական անտառ՝ սկսած Գառնիից մինչև



Պատկեր 4 Խոսքովի արգելոց

Արաքս գետը: Անտառը բաժանված էր երկու մասի. Գառնիից Դվին և Դվինից Արաքս՝ Խոսքովակերտ: Այս անտառները ոչ միայն էկոլոգիական, այլև բնապահպանական մեծ դեր էին խաղում, խոնավեցնելով Արարատյան դաշտի չոր կիսանապատային տարածքները (Պատկեր 5):

Խոսքով Կոտակի այս նախաձեռնությունները առանձնակի կարևորությամբ ընդգծվեցին հայ պատմագիրների, հատկապես Մովսես Խորենացու կողմից, ում «Հայոց պատմություն» գրքում պահպանվել են այս աշխատանքների մասին մանրամասն տեղեկություններ: Մովսես Խորենացին գրում է, որ Խոսքովը տնկեց անտառ Ազատ գետի մոտ, որն առ այսօր անվանվում է նրա անունով, և կառուցեց արքայական ապարանք՝ բլրի վրա:

Խոսքով Կոտակի ստեղծած արհեստական անտառները, մասնավորապես Տաճար Մայրին և Խոսքովակերտը, մեծ ազդեցություն ունեցան Արարատյան դաշտի էկոհամակարգի վրա: Չնայած դարերի ընթացքում անտառի Խոսքովակերտ հատվածը վերացել է և պահպանվել են այս անտառներից միայն հատվածներ,

ծուլվելով բնական տարածքներին: Խոսրովի անունը անմահացել է նաև Խոսրով բնակավայրի, Խոսրով գետի և Խոսրովսարի նվանումներով:

Խոսրով Կոտակի հիշատակը հավերժացվել է նաև նրան վերագրվող դամբարանով, որը տեղակայված է Կոտուց լեռան լանջին:

Խոսրովի անտառի տարածքն ու հարակից հատվածները ձևավորեցին արգելոցային գոտի՝ հիմք դնելով՝ 13.09.1958թ-ին Խոսրովի պետական արգելոցի ստեղծմանը: Այն ոչ միայն բնական ժառանգության պահպանումն ապահովող տարածք է, այլև խորհրդանշ է բնապահպանական գիտակցվածության և հայ ժողովրդի հարգանքի Խոսրով Կոտակի հանդեպ²¹:

Արգելոցում պահպանվում են մեզ հասած գիհու և կաղնու անտառները, կիսաանապատային և ֆրիգանային լանդշաֆտների չորասեր համակեցությունները և այլ միջերկրածովյան ռելիկտային



Պատկեր 5 «Խոսրովի անտառ» պետական արգելոց

բուսականության էկոհամակարգերն, ինչպես նաև այդ միջավայրերին հարմարված հազվագյուտ կենդանիների և բույսերի գենոֆոնդը: Արգելոցի տարածքում հանդիպում են 1849 տեսակի բարձրակարգ բույսեր և 283 տեսակի ողնաշարավոր կենդանիներ: Այստեղ պահպանվում են ՀՀ կենտրոնական մասի չոր նոսրանտառային, ֆրիգանային ու կիսաանտառային լանդշաֆտները՝ դրանց բուսական ու կենդանական եզակի համակցություններով: Արգելոցի ֆլորան ներառում է 1686 բուսատեսակներ, որոնցից 146-ը գրանցված են ՀՀ և նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքերում²²:

Արգելոցում կան 55 տեսակի կաթնասուններ՝ գորշ արջը, վարազը, ոզնին, Հայկական մուֆլոնը, բեզուարյան այծը, լուսանը, գայլը, աղվեսը և այլն: Հանդիպում են 142 տեսակի թռչուններ, 33 տեսակի սողուններ և այլն: Արգելոցում հանդիպում են կարիճների մի քանի տեսակներ, տիգեր: Թիթեռներից շատ տեսակներ գրանցված են նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքում:

- «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրը գտնվում է Արարատյան գոգավորությունում, Վեդի գետի ձախ ափին, Խոսրովի արգելոցի հարևանությամբ 1100-1200մ բարձրության վրա, զբաղեցնում է 95.9 հա տարածք: Պահպանության օբյեկտներն են ավազային անապատին բնորոշ կենդանական աշխարհը և տիպիկ պսամոֆիլ բուսականությունը:

²¹ <http://ararat.mtad.am/History/>

²² Գերմանիայի բնության պահպանության միության (NABU) հայաստանյան մասնաճյուղի պաշտոնական կայք՝ <https://nabu.am/hy/eco-education/bhpt/argelocner/xosrovi-antar-petakan-argeloc>

- «Եղեգնաձորի» արգելավայրը գտնվում է Արփայի աջակողմյան Եղեգիս վտակի ավազանում 1200-2800 մ բարձրության վրա, զբաղեցնում է 4200 հա տարածք: Այս կիրճում աճում են մի շարք էնդեմիկ բուսատեսակներ, որոնք գրանցված են նախկին ԽՍՀՄ-ի և ՀՀ Կարմիր գրքերում:
- «Ջերմուկի ջրաբանական» արգելավայրը գտնվում է Վայոց ձորի մարզում՝ Արփա գետի վերին հոսանքի շրջանում՝ ծովի մակերևույթից 2000-2500մ բարձրության վրա, զբաղեցնում է 17371.76 հա տարածք: Ստեղծվել է հանքային ջրերի տաք աղբյուրների («Ջերմուկ» հանքային ջուր) սնման ավազանների պահպանության նպատակով:
- «Ջերմուկի անտառային» արգելավայրը գտնվում է Արփայի վերին հոսանքում 2000-2500մ նիշի վրա, զբաղեցնում է 3865 հա տարածք: Պահպանության օբյեկտներն են կաղնու անտառները ու մի քանի էնդեմիկ ծառատեսակներ, կենդանական աշխարհից՝ հայկական մուֆլոնը, բեզուարյան այծը, վարազը և արջը:
- «Հերիերի նոսրանտառային» արգելավայրը գտնվում է Արփայի աջակողմյան Հերիեր վտակի ավազանում 1600-1800 մ բարձրության վրա, զբաղեցնում է 6139 հա տարածք: Պահպանելու օբյեկտն է քսերոֆիտ լեռնատափաստանային բուսականությունը՝ ներկայացված գիհու նոսր անտառների և տրագականտային գազերի զանգվածներով:
- «Խոր Վիրապ» պետական պատմամշակութային արգելավայրը զբաղեցնում է 50.28 հա տարածք: Կան արժեքավոր ջրաբուսատեսակներ: Բացի «Խոր Վիրապ» վանքային համալիրից կան նշանավոր եկեղեցիներ, խաչքարեր, տապանաքարեր և այլն:

3.3.2 Պատմամշակութային ռեսուրսներ

Պատմամշակութային ռեսուրսների գնահատումը ՀՀ-ում, մասնավորապես Արարատյան ԶԿՏ-ում մեծ նշանակություն է ձեռք բերում: Պատմական հուշարձանները տարածաշրջանում դասվում են տարբեր դարաշրջաններին՝ սկսած նախնադարյան շրջանի կրոնիկներից, մինչև ուշ միջնադարում կառուցված ամրոցներն ու վանքերը: Մեզ հասած բազմաթիվ պատմական հուշարձաններն իրենց վեհությամբ, դասական կանգուն և ավեր վիճակով կարող են զբոսաշրջության զարգացման նախապայմանների համակարգում մեծ նշանակություն ունենալ:

Կարմիր գիրք

Հայաստանի Ամերիկյան Համալսարանի (ՀԱՀ) Յակոբեան բնապահպանական կենտրոնի կողմից ստեղծվել է երկլեզու (հայերեն, անգլերեն) Կարմիր գրքի օնլայն ատլաս²³, որն իր մեջ ներառում է Բույսերի կարմիր գիրքից և Կենդանիների կարմիր գրքից վերցված տեղեկատվական ցանկը:

²³ <https://ace.aua.am/hy/gis-and-remote-sensing/maps/red-book-of-armenia/>

3.4 Բնական աղետների գոտիներ

Արարատյան ԶԿՏ-ում համարյա ամեն տարի առաջանում են տարատեսակ բնույթի տարրերային աղետներ՝ գետերի գարնանային վարարումներ, սելավներ, սողանքներ, էրոզիա, քարաթափումներ, ջրակալումներ, ցրտահարություններ, երաշտներ, որոնք առաջացնում են տարատեսակ արտակարգ իրավիճակներ: Թվարկվածներից ջրի և ջրային միջավայրի վրա առավել զդեցություն են գործում գարնանային վարարումները, սելավները և սողանքները:

Գարնանային վարարումների և սելավների ժամանակ Ազատ, Վեդի և Արփա գետերում և դրանց վտակներում ձևավորված ջրի առավելագույն ելքերը կարող են ջրածածկել գյուղատնտեսական հողատարածքները, բնակավայրերը, ճանապարհները, ջրաբերուկները լցնել ոռոգման և խմելու ջրի ջրաղբյուրներ՝ ստեղծելով մեծ դժվարություններ ջրամատակարարման համակարգում:

Էրոզիոն երևույթները հանդիսանում են բերվածքների, հատկապես կախյալ ջրաբերուկների առաջացման հիմնական պատճառը: Արարատյան ԶԿՏ-ում էրոզիոն երևույթները և քայքայված տարածքները ըստ բարձրության, չնայած թեքությունների ավելացմանը, նվազում են բուսածածկի ավելանալուն զուգընթաց: Ցածր բարձրություններում, ցամաքային կլիմայական պայմաններում, քայքայված, հողմահարված և էրոզացված տեղամասերը զբաղեցնում են մեծ տարածքներ հատկապես Երանոսի, Ուրցի, Երասխի և այլ շղթաների հարավահայաց դիրքադրության լանջերում:

Արարատյան ԶԿՏ տարածքում ակտիվ սողանքային տարածքներում են գտնվում Ողջաբերդ և Գնիշիկ գյուղերը, միջին բարձրության լեռնային գոտիներում՝ Վեդիի ավազանը, Ջերմուկի սարավանդները և այլն: Ողջաբերդի, Վեդիի սողանքային խմբերը գենետիկորեն կապված են Գառնիի խզումնային երկրաշարժային ակտիվության հետ: Սողանքներից ժամանակին խաթարվել են (և այսօր էլ խաթարված են մնում որոշ տարածքներ) Վայոց ձորի մարզի Չիվա, Ագարակածոր, Մարտիրոս, Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնքների տները:

4. ԲՆԱԿԱՆ ԴՆՈՒՄՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արարատյան ԶԿՏը վարչատարածքային տեսակետից ընդգրկում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի և Արարատի տարածաշրջանները, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի խոշորացված համայնքի Գառնի, Գեղարդ, Գողթ բնակավայրերի տարածքները:

Համաձայն Վիճակագրական կոմիտեի տվյալների 2023թ. հունվարի 1-ի դրությամբ Արարատ համայնքի բնակչության թիվը կազմում է 23731 մարդ, Արտաշատ համայնքինը՝ 72206 մարդ:

Արարատ խոշորացված համայնքն ընդգրկում է 10 բնակավայր, կենտրոնը՝ Արարատ քաղաք, Արտաշատ խոշորացված համայնքն ընդգրկում է 38 բնակավայր, կենտրոնը՝ Արտաշատ քաղաք:

Համաձայն Վիճակագրական կոմիտեի տվյալների 2023թ. հունվարի 1-ի դրությամբ Գառնի խոշորացված համայնքի Գառնի բնակավայրի բնակչության թիվը կազմում է 8096 մարդ, Գեղարդ բնակավայրի բնակչության թիվը՝ 253 մարդ, Գողթ բնակավայրի բնակչության թիվը՝ 2081 մարդ:

Համաձայն Վիճակագրական կոմիտեի տվյալների, ՀՀ Վայոց ձորի մարզի մշտական բնակչության թվաքանակը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 47661 մարդ:

Համայնքների թիվը՝ 5, Արենի, Եղեգիս, Եղեգնաձոր, Ջերմուկ, Վայք: Բնակավայրերի ընդհանուր թիվը՝ 55, որոնցից մշտապես հաշվառված բնակչությամբ՝ 45-ը:

Վայոց ձորի մարզկենտրոնն է Եղեգնաձոր քաղաքը, բնակչության թիվը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ 7022 մարդ, մարզի քաղաքներից է նաև Վայք քաղաքը՝ 5258 մարդ և Ջերմուկ քաղաքը 3880 մարդ²⁴ մշտական բնակչությամբ: Մարզի մյուս բնակավայրերը գյուղական են:

5. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՆՇՈՒՄՆԵՐԸ և ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՎՐԱ

5.1 Շարժիչ ուժեր

5.1.1 Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսությունը Արարատյան ԶԿՏ-ի տնտեսական զարգացման հիմնական ուղղությունն է:

2022 թվականի դրությամբ Արարատյան ԶԿՏ-ի Արփայի գետավազանում գյուղատնտեսական նշանակության հողերը զբաղեցնում են մոտ 189,537.1 հա, որից 15,900.3 հա վարելահողեր են: Գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են անասնաբուծությամբ՝ հետևյալ ենթաճյուղերով՝ խոշոր եղջերավոր,

²⁴ <https://www.armstat.am/am/?nid=82&id=2616>

բրդատու ոչխարաբուծություն, այծաբուծություն, մեղվապահություն, թռչնաբուծություն: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարաբուծությունը: Գյուղատնտեսության մեջ առաջատար է անասնապահությունը: Բուսաբուծության մեջ աչքի են ընկնում խաղողագործությունն ու պտղաբուծությունը: Այստեղ աճում են ծիրանի, բալի, տանձի, դեղձի, խնձորի, փշատի, սերկևիլի, սալորի, կեռասի, խաղողի բազմաթիվ տեսակներ, ընկույզ և հատապտուղներ: Արփայի հովտի ցածրադիր մասերում զբաղվում են բանջարաբուստանային կուլտուրաների մշակությամբ, իսկ մարզի նախալեռնային գոտին համարվում է ՀՀ խաղողագործության 4 շրջաններից մեկը, որոնք հումք են հանդիսանում գինեգործության համար:

ՀՀ ՇՄՆ ԶՌԿՎ-ի տվյալների համաձայն, 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ Արարատյան ԶԿՏ-ում ոռոգման նպատակով իրականացվելիք ջրօգտագործման ծավալը 730.347մլն. մ³/տարի է, որի 95%-ը բաժին է ընկնում մակերևութային, 5%-ը՝ ստորերկրյա ջրային ռեսուրսներին:

Արարատյան ԶԿՏ-ի գյուղատնտեսական նշանակության հողերի զգալի մասը կազմում են վարելահողերը և արոտավայրերը, որոնք ազդեցություն են թողնում հատկապես Արփա գետի ջրի որակի վրա:

5.1.2 Ձկնաբուծություն

Ձկնաբուծությունը Արարատյան ԶԿՏ-ում զարգացած է: ՀՀ ՇՄՆ ԶՌԿՎ-ի տվյալների համաձայն, 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ Արարատյան ԶԿՏ-ում տրվել է 18 ջրօգտագործման թույլտվություն՝ ընդամենը առմամբ՝ 37.375 մլն. մ³/տարի ջրի ծավալով, որի 89%-ը բաժին է ընկնում մակերևութային, 11%-ը՝ ստորերկրյա ջրային ռեսուրսներին: Գետավազանում ձկնաբուծության համար հիմնականում օգտագործվում են Արարատյան դաշտավայրի ստորերկրյա ջրերը, ինչպես նաև Արփա, Վեդի, Հերիեր, Արաքս գետերի ջրերը:

5.1.3 Արդյունաբերություն

Արարատյան ԶԿՏ-ում արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են սննդամթերքի և խմիչքների արտադրությունը (մսի և մսամթերքի մշակում և պահածոյացում, մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, կաթնամթերքի, ալյուրի, ըմպելիքի արտադրություն), ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրություն (ցեմենտի արտադրություն), մետաղագործական արդյունաբերություն (ոսկի):

Արփայի գետավազանում արդյունաբերական ոլորտը համալրում են նաև պանրագործությունը, հանքային ջրերի արտադրությունը և գինեգործությունը: Կան նաև մի քանի փոքր հիդրոէլեկտրակայաններ, սարքաշինական գործարան՝

Եղեգնաձորում: Այստեղ հիմնականում զարգացած է «Ջերմուկ» հանքային ջրերի և խաղողի գինու արտադրությունները:

Վեդիի գետավազանում գործում է «Գեոպրոմայինգ Գոլդ» ՍՊ ընկերության Արարատի ոսկու կորզման արտադրությունը, որը շահագործում է Արարատի պոչամբարը: Պոչամբարը գտնվում է գործարանից մոտ 5,800 մ հեռավորության վրա, դեպի արևմուտք: Այն զբաղեցնում է 165հա տարածք, շահագործման է հանձնվել 1976թ-ին: Պոչամբարի նախագծային ծավալը 11.5 մլն մ³ է:

Գետավազանում գործում է նաև «Արարատցեմենտ» ՓԲ ընկերությունը: «Արարատցեմենտ» ՓԲԸ-ն աշխատում է տեղական հումքի բազայով:

Ազատի գետավազանում խոշոր արդյունաբերական գործարանները բացակայում են:

ՀՀ ՇՄՆ ՋՌԿՎ-ի տվյալների համաձայն, 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ Արարատյան ՋԿՏ-ում տրվել է արդյունաբերական նպատակով ջրօգտագործման 20 թույլտվություն, ընդանուր առմամբ՝ 7.414 մլն. մ³/տարի ջրի ծավալով: Այս ծավալի 41%-ը բաժին է ընկնում մակերևութային, 39%-ը՝ ստորերկրյա ջրային ռեսուրսներին:

Արդյունաբերությունը էական աղբեցություն չի թողնում ջրային ռեսուրսների վրա:

5.1.4 Զբոսաշրջություն

Արարատյան ՋԿՏ-ում առկա է զգալի զբոսաշրջային ներուժ: Արարատյան ՋԿՏ-ն իր բնությամբ և պատմամշակութային ժառանգությամբ համարվում է հայկական զբոսաշրջության ամենագրավիչ անկյուններից մեկը: Այստեղ ամեն ինչ, ներառյալ՝ Արենի խաղողի տեսակը, քաղցրահամ մրգերը, բնության հուշարձանները, ամրոցներն ու հեռավոր գյուղերը գրավում են զբոսաշրջիկներին: Այստեղ կան ավելի քան 500 մշակութային օջախներ և կոթողներ, այդ թվում՝ Գեղարդի վանքը, միջնադարյան վանական համալիր, որը ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում: Արարատյան ՋԿՏ-ում զբոսաշրջային կենտրոններն են Գառնիի, Գեղարդի, Արենիի, Ջերմուկի հանգստյան գոտիները և առողջարանները: Գործում են զբոսաշրջության զարգացման տեղեկատվական կենտրոններ, որը կարող է խթան հանդիսանալ տարածաշրջանում գյուղական տուրիզմի զարգացման համար: Արարատյան ՋԿՏ-ում գրանցված է ավելի քան 100 հյուրանոց և հանգստյան տուն:

Տուրիզմի ոլորտը ջրային ռեսուրսների վրա էական ճնշում չի թողնում:

5.1.5 Աղբավայրեր

Արարատյան ՋԿՏ-ի կոշտ թափոնների աղբավայրերի կառավարմանն առնչվող հարցերը շարունակում են մնալ որպես առաջնային, քանի որ չկան սանիտարահիգիենիկ և քաղաքաշինության պահանջներին համապատասխանող

աղբավայրեր, բացակայում են նաև արդյունաբերական և կենցաղային աղբի համար առանձին աղբավայրերը: Բացի այդ, աղբի կուտակման, հավաքման, տեղափոխման, պահեստավորման, մշակման, վերաօգտագործման, տնօրինման, հեռացման, ոչնչացման և թաղման աշխատանքները ոչ լիարժեք են իրականացվում:

Արարատյան ՋԿՏ-ում կա 6 խոշոր աղբավայր, որոնք շահագործվում են Գառնի, Արարատ, Եղեգնաձոր, Վեդի, Ջերմուկ, Վայք համայնքների կողմից: Աղբավայրերի ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 19.4 հա:

Գառնի գյուղում առկա է մեկ աղբավայր, որը գործում է 6 բնակավայրերի համար: Աղբավայրի մակերեսը 1.2 հա է, տեղափոխվող աղբի տարեկան ծավալը՝ 15,000 մ³:

Արարատ համայնքի աղբավայրը գտնվում է Արարատ քաղաքի վարչական տարածքում՝ քաղաքի կենտրոնից 2-3 կմ հեռավորության վրա, զբաղեցնում է 6.1 հա տարածք: Տարեկան հեռացվող աղբի ծավալը 1000 տոննա է:

Վեդիի աղբավայրը գտնվում է Վեդի քաղաքի հարևանությամբ, մակերեսը 4.9 հա է, հեռացվող աղբի ծավալը՝ ամսական 744 մ³:

Վայք համայնքում գործում է մեկ աղբավայր, որի մակերեսը 5 հա է, տարեկան հեռացվող աղբի ծավալը՝ 1000 տոննա:

Ջերմուկ համայնքում գործում է մեկ աղբավայր, դրա մակերեսը 0.5 հա է, հեռացվող աղբի ծավալը՝ 600 մ³:

Եղեգնաձոր համայնքում առկա է մեկ աղբավայր՝ 1.7 հա ընդհանուր մակերեսով:

5.1.6 Տրանսպորտ

2023թ. հունվարի 1-ի դրությամբ Արարատյան ՋԿՏ-ի ավտոմայրուղիներից համեմատաբար ծանրաբեռնված են եղել միջազգային նշանակության Երևան-Արարատ-Վայք-Գորիս-Կապան-Մեղրի-Ագարակ միջպետական ավտոճանապարհը: Հաշվի առնելով այն փաստը, որ միջպետական ճանապարհները հիմնականում անցնում են մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսներին ոչ շատ մոտ վայրերով, կարելի է եզրակացնել, որ տրանսպորտը էական ճնշում չի գործադրում ջրային ռեսուրսների վրա:

5.1.7 Ապագա ենթակառուցվածքների զարգացում

ՋԿՏ-ի մաս հանդիսացող մարզերի տարածքային զարգացման ռազմավարության նպատակներից է ունենալ հիդրոտեխնիկական կառուցվածքների արդիականացում ոռոգման նպատակով և գյուղատնտեսության զարգացում, ժամանակակից պահանջների համապատասխան կեղտաջրերի հեռացման օրենսդրություն և ցանց, զարգացած արդյունաբերություն, զարգացած զբոսաշրջություն:

Տարածաշրջանի առանցքային նպատակներից մեկն է հանդիսանում գյուղատնտեսական զարգացումը, ջրային ռեսուրսների կուտակումն, հոսքակորուստների նվազեցումը, ոռոգման ցանցի արդիականացումն, ինչպես նաև

նորերի կառուցումը: Տարածաշրջանի մաս կազմող համայնքները ձգտում են ունենալ գյուղատնտեսության ժամանակակից տեխնիկա, տեխնոլոգիաներ և լավագույն փորձ: Այն ներառում է արդյունավետ ոռոգման մեթոդների ընդունում, հողօգտագործման օպտիմալացում և կայուն գյուղատնտեսական գործընթացների իրականացում:

Արարատյան ԶԿՏ-ում ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման համար անհրաժեշտ է գործող հիդրոտեխնիկական ենթակառուցվածքների վերանորոգում և վերազինում, ինչպես նաև ջրի կուտակում նոր ջրամբարների կառուցմամբ:

ՀՀ կառավարության կողմից համաֆինանսավորվող ծրագրով Վեդի գետավազանում կառուցվում է Վեդիի ջրամբարը՝ մոտ 29 մլն խմ ծավալով: Զրամբարի իշխման տակ են գտնվում ավելի քան 3220 հա ոռոգելի հողատարածքներ 3.2 մլն. մ³ ծավալով:

Ըստ Արարատի մարզպետարանի կողմից տրամադրած տեղեկատվության, Վեդիի ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցմամբ ջրամբարի իշխման տակ կորուստները կկրճատվեն 20-25%-ով, կնվազի Սևանա լճից ոռոգման նպատակով ջրապահանջարկը, ոռոգելի հողատարածքները կավելանան շուրջ 300 հա-ով, կբարձրացվի մշակաբույսերի բերքատվությունը, էլեկտրաէներգիայի տարեկան տնտեսումը կկազմի մոտ 19.0 մլն կվտ/ժ:

5.2 Ծնշումներ և ազդեցություններ

5.2.1 Աղտոտման կետային աղբյուրներ

2023 թվականի դրությամբ, Արարատյան ԶԿՏ-ում հեռացվող կեղտաջրերի ծավալը 2. 52 մլն մ³ է: Արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերի շուրջ 90-95%-ը չի հավաքվել և մաքրվել: Արարատյան ԶԿՏ-ում առկա է կեղտաջրերի մաքրման մեկ կայան՝ Զերմուկի մաքրման կայանը: Սակայն, չնայած կայանի առկայությանը, կենցաղային և արդյունաբերական կեղտաջրերը միանգամից թափվում են ջրային ռեսուրսներ, քանի որ մաքրման կայանը չի աշխատում պատշաճ կերպով, ինչպես նաև կեղտաջրերի խողովակները բավականին մաշված են և հիմնանորոգման կարիք ունեն:

Արարատյան ԶԿՏ-ում սննդի և ոչ սննդի արդյունաբերության կեղտաջրերը հիմնականում թափվում են կոյուղու կոլեկտոր, և դրանց ազդեցությունը գումարվում է կենցաղային կեղտաջրերի ազդեցությանը:

Աղյուսակ 4. Քաղաքային և արդյունաբերական կեղտաջրերի ծավալը Արարատյան ԶԿՏ-ում



ԳԵՏԱՎԱԶԱՆ	Կոմունալ-կենցաղային կեղտաջրեր ²⁵	
	Օրական ծավալ, մ ³ /օր	Տարեկան ծավալ, մլն մ ³ /տ
Արփա գետ	4614.7	1.68
Վեդի գետ	2289	0.84
Ազատ գետ ²⁶	-	-
ԸՆԴՀԱՆՈՒՐ	6903.7	2.52

Արարատյան ԶԿՏ-ում սննդի արդյունաբերական ձեռնարկությունները շատ են և բազմազան: Սննդի ձեռնարկությունների արտանետումների մասնաբաժինը հայտնի չէ, հետևաբար հնարավոր չէ առանձնացնել հատկապես սննդի ձեռնարկությունների ճնշումը կենցաղային ճնշումից: Սակայն, բոլոր դեպքերում, գետավազաններում գետերի ջրի որակի վրա սննդի ձեռնարկություններից ճնշումն առկա է: Ոչ սննդի արդյունաբերության ձեռնարկություններն օգտագործում են չնչին քանակությամբ ջուր և ջրահեռացում գրեթե չեն կատարում: Համեմատաբար խոշոր ջրօգտագործող ձեռնարկություններից են «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊ ընկերության Արարատի ոսկու կորզման գործարանը, «Արարատցեմենտ» ՓԲ ընկերությունը, «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲ ընկերությունը:

Արարատյան ԶԿՏ-ում կենցաղային կոշտ թափոնների աղբավայրերը կառուցվել են հիմնականում քաղաքային համայնքներում, որոնք ներկայումս չեն համապատասխանում ժամանակակից քաղաքաշինական, սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի պահանջներին: Աղբավայրերը չունեն տարածքում ձևավորվող կեղտաջրերի հավաքման ֆիլտրացվող համակարգեր, ինչի հետևանքով կեղտաջրերը ներծծվում են դեպի ընդերք՝ աղտոտելով ստորերկրյա ջրերը, կամ անձրևաջրերից ձևավորված մակերևութային հոսքով թափվում են հարակից գետեր: Բացի քաղաքային աղբավայրերից, գետավազաններում բնակավայրերին կից հատվածներում տարիների ընթացքում ստեղծվել են կամ տարերայնորեն ձևավորվել են բազմաթիվ աղբավայրեր և աղբանոցներ, որոնք զբաղեցնում են զգալի տարածքներ և առաջացնում են բնապահպանական և սանիտարական խնդիրներ: Հաճախ կենցաղային աղբը թափվում է աղբի համար նախատեսված վայրերից դուրս՝ պատահական վայրերում՝ բակային տարածքներում, այգիներում, բանջարանոցներում, ավտոճանապարհների եզրերին, ձորերում, գետափերին:

²⁵Կեղտաջրերի քանակի մասին տվյալները ստացվել են «Վեդիա ջուր» ՓԲԸ-ից

²⁶ Համաձայն «Վեդիա ջուր» ՓԲԸ-ի գրության Ազատ գետ կոյուղու արտահոսք չկա:

5.2.2 Աղտոտման ցրված աղբյուրներ

Ցրված աղտոտումն առաջանում է լայն տարածք զբաղեցնող գործունեությունից, ինչպիսին է, օրինակ, գյուղատնտեսությունը և այլ աղբյուրներ: Ցրված աղտոտվածության մակարդակը կախված է ոչ միայն մարդածին գործոններից, ինչպիսին է, օրինակ, հողօգտագործումը և հողօգտագործման ինտենսիվությունը, այլ նաև բնական գործոններից, ինչպիսիք են կլիման, հոսքային պայմանները և հողի բնութագրիչները: Այս գործոնների ազդեցության ուղիները զգալիորեն տարբեր են: Ազոտի համար ցրված աղտոտման հիմնական ուղին ստորերկրյա ջրերն են, մինչդեռ ֆոսֆորի դեպքում՝ էրոզիան: Ցրված աղբյուրներից արտահոսքերի չափումը բարդ խնդիր է, հիմնականում, հնարավոր է միայն մաթեմատիկական մոդելավորման միջոցով:



Պատկեր 6 ՀՀ մակերևութային ջրային ցանցի մոնիթրինգի նմուշառման կետերի բաշխվածությունը ըստ ջրավազանային կառավարման տարածքների

ՀՀ մարզպետարանների տրամադրած տվյալների համաձայն, Արարատյան ԶԿՏ-ում գյուղատնտեսական մշակաբույսերի համար օգտագործվել է շուրջ 2000 տոննա պարարտանյութ: Արվա գետի ավազանի գետերի ջրի որակի գնահատման արդյունքների համաձայն նկատվում է նիտրիտ և նիտրատ իոնների կոնցենտրացիաների աճ, ինչը պայմանավորված է տարածաշրջանում վարելահողերից հետադարձ հոսքերի աղտոտմամբ՝ դաշտերի ոչ ճիշտ չափաբաժնով պարարտացման արդյունքում:

Արարատյան ԶԿՏ-ում անասնապահությունը համարվում է գյուղատնտեսության հիմնական ճյուղերից մեկը: Ֆերմերային տնտեսությունների տարածքում գոմաղբի լվացումից հոսքաջրերը թափվում են գետեր կամ ներթափանցում են ստորերկրյա


ջրեր՝ աղտոտելով ջրային ռեսուրսներն ազոտի, ֆոսֆորի և օրգանական այլ տիպի միացություններով:

Արարատի ՋԿՏ-ով է անցնում Երևան-Արարատ-Վայք-Գորիս-Կապան-Մեղրի-Ագարակ միջպետական ավտոճանապարհը: Առկա են նաև պետական ու ներհամայնքային ավտոճանապարհները: Այնուամենայնիվ, տրանսպորտային ուղիները հեռու են գետահուններից և ստորերկրյա ջրային ռեսուրսներից, այդ իսկ պատճառով էական ճնշում չեն գործադրում ջրային ռեսուրսների վրա: Հիմնվելով ջրավազանի վերլուծության փուլում կատարված ավտոմոբիլային մայրուղիների երթևեկության ինտենսիվության և բեռնափոխադրումների վերլուծության և գնահատման արդյունքների վրա, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ ճանապարհները հիմնականում անցնում են մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսներից հեռու վայրերով, կարելի է եզրակացնել, որ ավտոմոբիլային տրանսպորտը էական ճնշում չի գործադրում ջրային ռեսուրսների ջրի որակի վրա:

Պատկեր 6 –ը արտապատկերում է Հայաստանի Հանրապետությունում մակերևութային ջրային ցանցի մոնիթրինգի նմուշառման կետերի բաշխվածությունը ըստ ջրավազանային կառավարման տարածքների:

5.2.3 Քանակական ճնշումներ. ջրառ և ջրամատակարարման ծառայություններ

Համաձայն ՀՀ ՇՄՆ ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից տրամադրված ջրօգտագործման թույլտվությունների տվյալների՝ 2023 թ. դեկտեմբերի դրությամբ Արարատյան ՋԿՏ-ում տարբեր նպատակների համար տրամադրված է եղել 189 ջրօգտագործման թույլտվություն հիդրէներգետիկ, ոռոգման, արդյունաբերական խմելու կենցաղային, նպատակներով (Աղյուսակ 5)²⁷: Համաձայն տեղեկատվության Արարատյան ՋԿՏ-ում տրամադրված է 849. 3 մլն մ³ ջրօգտագործման թույլտվություն (Պատկեր 7)²⁸:



Պատկեր 7 Արարատյան ՋԿՏ-ում ջրօգտագործման պատկերներն ըստ ջրօգտագործման թույլտվությունների

^{27,28} ՀՀ ՇՄՆ ջրային ռեսուրսների կառավարման վարչություն

²⁸ <http://env.am/shrjaka-mijavayr/jrogtagorcman-tuyiltvutyunner>

Հաշվի առնելով, որ հիդրոէներգետիկ ջրօգտագործումը ոչ սպառողական է, ջրօգտագործման բաշխվածությունն ըստ ոլորտների հետևյալն է. խմելու-կենցաղային նպատակներով ջրառը կազմում է՝ 7.90%, ոռոգմանը՝ 86.0%, արդյունաբերականը՝ 0.90%, ձկնաբուծությունը՝ 4.40%, ջրարբիացումը՝ 0.80%: Հարկ է նշել, որ ըստ ջրօգտագործման թույլտվությունների տվյալների Արարատյան ԶԿՏ-ում արդյունաբերական նպատակով ջրօգտագործումը և ջրարբիացումը ջրառի ծավալներով գրեթե հավասար են միմյանց:

Աղյուսակ 5. Տարեկան ջրօգտագործումն ըստ ոլորտների՝ Արարատյան ԶԿՏ-ում 2023 թվականի դեկտեմբերի դրությամբ

ԶԿՏ	Ընդհանուր ջրօգտագործում	Ջրօգտագործումն ըստ ոլորտների մլն. մ ³					
		Խմելու-կենցաղային	Ոռոգում	Արդյունաբերական	Ձկնաբուծություն	Ջրարբիացում	Հիդրոէներգետիկա
Արարատյան	849.3*	67.1	730.3	7.70	37.4	6.80	2051.2

*հիդրոէներգետիկ նպատակով ջրառը ներառված չէ

Խմելու-կենցաղային նպատակներով ջրօգտագործում: Ըստ ջրօգտագործման թույլտվությունների, 2023թ. դեկտեմբերի դրությամբ Արարատյան ԶԿՏ-ում խմելու-կենցաղային նպատակով ջրառը կազմել է 67.1 մլն մ³/տարի: Արարատյան ԶԿՏ-ի բնակավայրերում խմելու-կենցաղային նպատակով ջրամատակարարման համակարգը հիմնականում 40-60 տարեկան է և մասամբ խափանված: Ջրամատակարարման համակարգը հիմնականում գոտիավորում չունի: Օրվա կարգավորող ջրամբարների մեծ մասը վերանորոգման և նոր սարքավորումներով հագեցման կարիք ունեն: Խմելու ջրի մաքրման և ախտահանման սարքավորումների տեխնոլոգիական մակարդակը բավարար չէ: մեծ են ջրամատակարարման համակարգում ջրի կորուստները: Խմելու-կենցաղային նպատակով ջրօգտագործումը կազմում է ընդհանուր ջրօգտագործման ընդամենը՝ 7.90%-ը՝ բացառությամբ հիդրոէներգետիկայի, և ջրառը չի ազդում Արարատյան ԶԿՏ-ի ջրային ռեսուրսների քանակի վրա:

Ոռոգման նպատակով ջրօգտագործում: 2023 թ. դեկտեմբերի դրությամբ Արարատյան ԶԿՏ-ում ոռոգման նպատակով ջրօգտագործումը, համաձայն ջրօգտագործման թույլտվությունների կազմել է մոտ 730.3 մլն մ³: Ընդ որում այդ ծավալի 228.6 մլն մ³-ը վերցվում է Հրազդան գետից սնվող Հրազդան-Արաքսյան կոլեկտորից: Այսինքն առկա է ջրային ռեսուրսների տեղափոխում այլ ջրավազանային կառավարման տարածքից: ԶԿՏ-ի տարածքում ոռոգման ենթակառուցվածքը բավական քայքայված է: Ոռոգման կիրառվող մեթոդները (մակերեսային ոռոգում) ժամանակակից չեն, ինչի արդյունքում ջրի ընդհանուր կորուստները հասնում են մինչև 40-50%: Արարատյան ԶԿՏ-ում ոռոգման նպատակով ջրառը կազմում է ընդհանուր ջրօգտագործման ավելի քան 86%-ը և այն

էական ճնշում է գործադրում ջրային ռեսուրսների քանակի, հետևապես էկոլոգիական վիճակի վրա:

Արդյունաբերական նպատակներով ջրօգտագործում: Արարատյան ԶԿ-ում արդյունաբերական նպատակով ջրառը կազմում է 7.70 մլն մ³, և այն էական ճնշում չի գործադրում ջրային ռեսուրսների քանակի վրա:

Հիդրոէլեկտրաէներգիայի արտադրության համար ջրօգտագործում: Արարատյան ԶԿ-ում շահագործվում է 55 ՓՀԷԿ: Հիդրոէներգետիկան էական ճնշում է գործադրում գետավազանի ջրային ռեսուրսների քանակի վրա հատկապես Արփայի գետավազանում:

Ձկնաբուծության նպատակով ջրօգտագործում: 2023թ. դեկտեմբերի դրությամբ Արարատյան ԶԿ-ում ձկնաբուծության նպատակով ջրառը, համաձայն ջրօգտագործման թույլտվությունների, կազմել է 37.4 մլն մ³, ընդ-որում 4.26 մլն մ³-ը աղբյուրներից և մեկ հորատանցքից, մնացածը հիմնականում տեղակայված է գետափնյա տարածքներում և էական ճնշում չի գործադրում ջրային ռեսուրսների քանակի և որակի վրա:

6. ԶՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՊԱՇԱՐՆԵՐ

Արարատյան ԶԿՏ-ի օգտագործելի ջրային ռեսուրսները, ռազմավարական և ազգային ջրային պաշարները որոշվել են «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն: Ըստ այդմ` օգտագործելի ջրային ռեսուրսները որոշվել են որպես ԶԿՏ-ի տարածքում ձևավորվող գետային հոսք, բացառությամբ` էկոլոգիական թողքի: Ռազմավարական ջրային պաշարում ներառվել է ԶԿՏ-ի ջրամբարների մեռյալ ծավալի հնարավոր օգտագործելի մասը, լճերի ծավալի օգտագործման ենթակա մասը և ստորերկրյա հոսքը:

ԶԿՏ-ի ազգային ջրային պաշարը որոշվել է ջրային ռեսուրսների, օգտագործելի ջրային ռեսուրսների և ռազմավարական ջրային պաշարի տարբերությամբ: Բոլոր արժեքները բերված են բազմամյա (1961-2022թթ. ժամանակահատված) միջին տարեկան տվյալների հիման վրա:

6.1 Օգտագործելի ջրային ռեսուրսներ

Արարատյան ԶԿՏ-ի Արփայի, Վեդիի և Ազատի գետավազանների օգտագործելի գետային հոսքի մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների բազմամյա միջին տարեկան արժեքները բերված են ստորև: Աղյուսակ 6-ում ներկայացվում են նաև ԶԿՏ-ի մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների ջրառաջարկի կանխատեսվող փոփոխությունները 2025-2100թթ. ըստ լավատեսական և վատատեսական սցենարների:

Աղյուսակ 6. Արարատյան ԶԿՏ-ի Արփա, Վեդի և Ազատ գետավազանների օգտագործելի ջրային ռեսուրսներն ու 2025–2100 թթ. կանխատեսվող փոփոխությունները ըստ սցենարների

		Ըստ լավատեսական սցենարի			Ըստ վատատեսական սցենարի		
Գետավազան	2013-2023թթ. բազմամյա միջին	2030թ	2070թ	2100թ	2030թ	2070թ	2100թ
Մակերևութային ջրառաջարկը, մլն մ³							
Արփա	351.9	351.4	350.4	350.5	338.0	333.6	315.7
Վեդի	64.8	61.4	56.0	55.4	63.0	64.3	61.5
Ազատ	68.6	67.9	65.7	68.7	66.0	64.3	61.1
Ստորերկրյա ջրառաջարկը, մլն մ³							
Արփա	100.8	98.9	95.6	96.0	96.8	95.6	90.4
Վեդի	74.35	73.7	71.7	74.5	74.0	72.9	74.4
Ազատ	228.64	227.7	226.1	226.0	219.8	214.2	203.7
Ընդհանուր ջրառաջարկը, մլն մ³							
Արփա	452.7	450.3	446.1	446.6	434.9	429.2	406.1
Վեդի	139.15	135.1	127.7	129.9	137.0	137.1	135.9
Ազատ	297.24	295.6	291.8	294.7	285.8	278.5	264.8
Արարատյան ԶԿՏ	889.1	881.0	865.6	871.2	857.7	844.8	806.8

Արփայի գետավազանի բազմամյա բնական գետային հոսքը կազմում է 738.7 մլն մ³ (Արփա գետի բնական հոսքը կազմում է 725.1 մլն մ³, իսկ Զահուկինը հարակից փոքր վտակների հետ միասին` 13.6 մլն մ³): Գետավազանի ընդհանուր

էկոլոգիական թողքի ծավալը կազմում է 115.7 մլն մ³, որից Արփա գետի էկոլոգիական թողքը՝ 113.81 մլն մ³, Ջահուկինը՝ 1.89 մլն մ³:

Արարատյան ՋԿՏ-ում էկոլոգիական թողքը հաշվարկված ՀՀ կառավարության 2018թ. հունվարի 25-ի №57-Ն որոշման հավելվածի պահանջների համաձայն:

2019-2022թթ. ընթացքում Արփայի գետավազանից տարեկան միջինում 171.07 մլն մ³ ջուր Արփա-Սևան թունելով տեղափոխվել է Սևանա լիճ, որը համարվում է տրանզիտային և հանվել է գետավազանի ընդհանուր օգտագործելի ռեսուրսների ծավալից: Ըստ այդմ՝ Արփայի գետավազանի օգտագործելի ջրային ռեսուրսները կազմում են 451.9 մլն մ³, որից 352.06 մլն մ³-ը մակերևութային հոսքն է, իսկ 99.84 մլն մ³-ը՝ ստորերկրյա (աղբյուրային) հոսքը:

Ազատի գետավազանի բազմամյա բնական գետային հոսքը 219.4 մլն մ³ է: Գետավազանի բնապահպանական թողքը 6.31 մլն մ³ է (Ազատ գետի բնապահպանական թողքը հաշվարկվել է՝ հաշվի առնելով Ազատի ջրամբարի բնապահպանական թողքի ջրաքանակը):

Ազատի գետավազանի օգտագործելի հոսքը 316.56 մլն մ³ է, որից 153.1 մլն մ³-ը մակերևութային հոսքն է, 59.98 մլն մ³-ը՝ ստորերկրյա (աղբյուրային) հոսքը, իսկ 103.44 մլն մ³-ը՝ ստորերկրյա ջրերի շահագործական պաշարները:

Վեդիի գետավազանի բազմամյա բնական գետային հոսքը 84.2 մլն մ³ է, որից Վեդի գետի (հարակից տարածքով) բնական հոսքը 73.0 մլն մ³ է, իսկ Արածո գետինը՝ 11.2 մլն մ³: Գետավազանի բնապահպանական ընդհանուր թողքը 8.34 մլն մ³ է, որից Վեդի գետի բնապահպանական թողքը 5.99 մլն մ³ է, իսկ Արածո գետինը՝ 2.35 մլն մ³:

Վեդիի գետավազանի օգտագործելի ջրային ռեսուրսները կազմում են 143.34 մլն մ³ է, որից 67.7 մլն մ³-ը մակերևութային հոսքն է, 8.2 մլն մ³-ը՝ ստորերկրյա (աղբյուրային) հոսք, իսկ 67.45 մլն մ³-ը՝ ստորերկրյա ջրերի շահագործական պաշարները:

Աղյուսակ 7-ում ներկայացվում է Արարատյան ՋԿՏ-ի օգտագործելի ստորերկրյա ջրային ռեսուրսներն՝ ըստ գետավազանների և կարգերի:

Աղյուսակ 7. Արարատյան ՋԿՏ-ի օգտագործելի ստորերկրյա ջրային ռեսուրսներն՝ ըստ գետավազանների²⁹

29 «Հնրափրակնները և անկանխելի ՄԱԿԻ և ՄԱԿԻ փորձագետների կողմից, 2024թ: Կախված ստորերկրյա ջրերի ձևավորման առանձնահատկություններից՝ Արարատյան ՋԿՏ-ում դրանք տեղաբաշխվում են խիստ անհավասարաչափ:

#	Գետավազան	Հաստատված օգտագործելի ջրային ռեսուրսներ (շահագործական պաշարները) լ/վրկ մլնմ ³ /տարի	Այդ թվում՝ ըստ կարգերի լ/վրկ մլնմ ³ /տարի			
			A	B	C ₁	C ₂
1	Ազատ	<u>2172</u> 68.5	<u>1465</u> 46.2	<u>437</u> 13.78	<u>270</u> 8.51	
2	Վեղի	<u>39</u> 1.23	<u>15</u> 0.47	<u>24</u> 0.76	-	
3	Արփա	<u>1360</u> 42.89	<u>1357</u> 42.79	<u>3.0</u> 0.1	-	
4	Արտաշատի իջվածք	<u>5619</u> 177.2	<u>2444</u> 77.10	<u>837</u> 26.39	-	<u>2338</u> 73.73
5	Երասխավանի իջվածք	<u>5687</u> 179.34	<u>1505</u> 47.46	<u>634</u> 19.99	<u>3548</u> 111.89	
Ընդամենը		<u>14877</u> 469.16	<u>6786</u> 214.01	<u>1935</u> 61.02	<u>3818</u> 120.4	<u>2338</u> 73.73

Արարատյան ԶԿՏ-ի ընդհանուր օգտագործելի ջրային ռեսուրսները կազմում են 911.8 մլն մ³/տարի:

Արարատյան ԶԿՏ-ի օգտագործելի ջրային ռեսուրսները, ռազմավարական և ազգային ջրային պաշարների վերաբերյալ տվյալները ներկայացվում են աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8. Արարատյան ԶԿՏ-ի օգտագործելի ջրային ռեսուրսները, ռազմավարական և ազգային ջրային պաշարները³⁰

Գետավազանի ջրային ռեսուրսները, մլն մ ³	Գետավազաններ			Արարատյան ԶԿՏ
	Արփա	Ազատ	Վեղի	
Օգտագործելի ջրային ռեսուրսները				
Մակերևութային հոսք	237.23	68.6	64.80	370.63
Ստորերկրյա հոսք (աղբյուրային)	100.8	125.2	6.9	232.9
Ստորերկրյա ջրերի հաստատված շահագործական պաշարներ	-	103.44	67.45	170.89
Ընդամենը	338.03 (առանց Արփա- Սևան թունելի	297.24	139.15	774.42

³⁰ ՀՀ ՇՄՆ «Հայիդրոմետ» ՊՈԱԿ, 2024թ

*Ստորերկրյա ջրերի օգտագործելի ռեսուրսները հաշվարկվել են ըստ աղբյուրային հոսքի, որոնք կազմում են գետի հոսքի մի մասը:

** Հաստատված ջրային պաշարները ջրային ռեսուրսների հաշվետվության:

	ԶԹ-ի 255.67 մլն մ ³)			
Ռազմավարական ջրային պաշարը				
Բնական լճերի ծավալի 1/3 մաս ³¹	-	-	-	-
Ջրամբարների մեռյալ ծավալի 2/3 մաս	16.74	6.1	1.33	24.17
Ստորերկրյա ջրերի հաստատված շահագործական պաշարներ	8.51	179.53	125.73	313.77
Ընդամենը	25.25	185.63	127.06	337.94
Ազգային ջրային պաշարը				
Բնական լճերի ծավալի 2/3 մաս	-	-	-	-
Ջրամբարների մեռյալ ծավալի 1/3 մաս	8.37	3.1	0.67	12.14
Ձնաբծեր և ֆիռնային դաշտեր	-	-	-	-
Ստորերկրյա ջրերի խորքային հոսք	19.5	116.8	32.4	168.7
Ընդամենը	27.87	119.9	33.07	180.84
Էկոլոգիական թողք	115.7	6.31	8.34	130.35

Կառավարման տարածքի ստորերկրյա բնական ռեսուրսների հոսքի վերաբերյալ տվյալներն՝ ըստ գետավազանների ներկայացված է աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9. Արարատյան ԶԿՏ-ի ստորերկրյա ջրային բնական ռեսուրսներն՝ ըստ գետավազանների³²

N°	Գետավազան	Ստորերկրյա հոսքի բաղադրիչներ լ/վրկ մլն մ³/տարի				Ծանոթություն
		Աղբյուրների հոսք	Դրենաժային հոսք	Խորքային հոսք	Ընդամենը	
1	Ազատ	2708.0	698	133.0	3539	Այսպես է նշվում Արարատյան ավազանի հյուսիս- արևմուտքից Արարատյանի և Երասխի իջվածքներ մյուսող խորքային հոսքը
		85.4	22.0	4.2	111.6	
2	Վեդի	260	439	1027	1726	
		8.19	13.84	34.40	54.43	
3	Արփա	3166	5693	618	9477	
		99.84	179.53	19.5	298.87	
Ընդամենը		6134	6830	1778	14742	
		193.5	215.4	56.1	464.9	

Արարատյան ջրային կառավարման տարածքում օգտագործման համար հասանելի ջրային պաշարները նվազել են շուրջ 517,68 մլն մ³-ով (Աղյուսակ 2): Այս կրճատման հիմնական պատճառներից է այն, որ նախորդ պլանի շրջանակում Սևանա լիճ տեղափոխվող ջրի ծավալը Արփա-Սևան ջրատարով ներառված էր ընդհանուր

³¹ Արարատյան ԶԿՏ-ում բնական լճերը փոքր են և չեն ներառվում ջրային հաշվեկշռում: Սակայն, ընդհանուր առմամբ, անհրաժեշտություն կա դրանց ծավալների գնահատման:

³² «Հնարավորությունները ՄԷ-ի բաժնիկի համար: ՄԷ-ի փորձագետների կողմից, 2024թ.

օգտագործելի պաշարների մեջ՝ առանց հանման, ինչպես նաև գետերի հոսքի նվազումը, որը պայմանավորված է կլիմայական փոփոխություններով:

Աղյուսակ 3. Արարադյան ԶԿՏ-ի 2016-2021թթ. և 2025-2030թթ. ժամանակահատվածի կառավարման պլանների օգտագործելի ջրային ռեսուրսների համեմատական վերլուծություն³³

Գեղավազան	Ընդամենը, մլն մ ³		Էկոլոգիական թողք	
	2016-2021	2025-2030	2016-2021	2025-2030
Արփա	338.03	722.6	115.7	84.2
Ազատ	297.24	402.3	6.31	32.0
Վեդի	139.15	167.2	8.34	17.3
Արարադյան ԶԿՏ	774.42	1292.1	130.35	133.5
Տարբերությունը	-517.68		-3.15	

Տվյալների տարբերությունը բացատրվում է նաև կիրառված մեթոդաբանական մոտեցումների փոփոխությամբ: Մասնավորապես, նախկինում Ազատ և Վեդի գետերի ավազանների հոսքային հաշվարկներում ներառվել էին նաև գետերի ջրհավաք ավազանների այն հատվածները, որտեղ գետային հոսքի ձևավորում չի կատարվում: Բնապահպանական թողքների տարբերությունները պայմանավորված են նրանով, որ Ազատ և Վեդի գետերում դրանք արհեստականորեն ավելացվել էին ստորին հոսանքների ջրհավաք տարածքների հաշվին, չնայած այն հանգամանքին, որ տվյալ հատվածներում իրական հոսքի ավելացում արձանագրված չէր:

³³ ՀՀ ՇՄՆ «Հայիդրոմետ» ՊՈԱԿ, 2024թ

7. ՀԻՄՆԱԴՐՈՒԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻՆ ԱՌՆՉՎՈՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎԱՎԵՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ և ԱՌՆՉՎՈՂ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ

7.1 Հիմնադրության փաստաթղթին առնչվող՝ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված կամ ստորագրված միջազգային պայմանագրեր

Աղյուսակ 11. Միջազգային և տարածաշրջանային կոնվենցիաներ³⁴

№ Միջազգային բնապահպանական կոնվենցիաներ ³⁵		Ընդունման ամսաթիվը	Ուժի մեջ է մտել Հայաստանում
1.	Ռամսարի կոնվենցիա	02.02.1971, Ռամսար	06.11.1993
2.	«Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիա»	16.11.1972, Փարիզ	05.12.1993
	• Կարթագենյան արձանագրություն	29.01.2000, Մոնրեալ	30.07.2004
3.	«ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիա կլիմային փոփոխության մասին»	09.05.1992, Յուժոպ	21.03.1994
	• Կիոտոյի արձանագրություն	11.12.1997, Կիոտո	16.02.2005
	• Կիոտոյի արձանագրության Դոհայի փոփոխություն	08.12.2012, Դոհա	31.03.2017
	• Փարիզյան համաձայնագիր	12.12.2015, Փարիզ	22.04.2017
4.	«ՄԱԿ-ի անապատացման դեմ պայքարի կոնվենցիա»	01.10.1994, Փարիզ	30.09.1997
5.	«Վիեննայի կոնվենցիա օզոնային շերտի պահպանության մասին»	22.03.1985, Վիեննա	30.12.1999
	• Մոնրեալի արձանագրություն օզոնային շերտը քայքայող նյութերի մասին	16.09.1987, Մոնրեալ	30.12.1999
	• Մոնրեալի արձանագրության Լոնդոնյան ուղղում	27.06.1990, Լոնդոն	22.10.2003
	• Մոնրեալի արձանագրության Կոպենհագենյան ուղղում	25.11.1992, Կոպենհագեն	24.02.2004
	• Մոնրեալի արձանագրության Պեկինյան փոփոխություն	29.11-03.12.1999, Պեկին	01.01.2001
	• Մոնրեալի արձանագրության Մոնրեալյան փոփոխություն	15-17.1997, Մոնրեալ	01.01.1999
6.	«Բազելյան կոնվենցիա»	22.03.1989, Բազել	30.12.1999
7.	«Ռոտերդամի կոնվենցիա»	10.09.1998, Ռոտերդամ	22.10.2003
8.	«Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիա	23.05.2001, Ստոկհոլմ	22.10.2003
9.	«Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին»	03.03.1973, Վաշինգտոն	21.01.2009
10.	«Վայրի կենդանիների միգրացվող տեսակների պահպանության մասին կոնվենցիա»	23.06.1979, Բոնն	01.03.2011
11.	«Մոդիկի վերաբերյալ Մինամատայի կոնվենցիա»	10.11.2013, Կոմամոտո	13.03.2018

³⁴ <https://ecoportal.am/wp/international-water-conventions/>

³⁵ <https://ecoportal.am/wp/international-water-conventions/>

Տարածաշրջանային կոնվենցիաներ

12.	«Մեծ տարածությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին կոնվենցիա»	30.11.1977	22.05.1997
13.	«Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին կոնվենցիա»	25.02.1991, Էսպո	10.09.1997
	• ԱԵՇՄՎԱԳ մասին կոնվենցիայի գնահատման մասին արձանագրություն	21.05.2003, Կիև	24.04.2011
14.	«Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին կոնվենցիա»	17.03.1992, Հելսինկի	19.04.2000
15.	«Օրիուսի կոնվենցիա»	25.06.1998, Օրիուս	30.10.2001
16.	«Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիա»	20.10.2000, Ֆլորենցիա	01.07.2004
17.	«Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին կոնվենցիա»	19.09.1979, Բեռլին	01.08.2008
18.	«Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա»	05.06.1992, Ռիո դե ժանեյրո	29.12.1993

7.2. Իրավական կարգավորումներ

7.2.1 Օրենքներ

- [«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին»](#) ՀՀ օրենք, ընդունվել է 03 մայիսի 2023-ին, N ՀՕ-150-Ն
- [«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին»](#) ՀՀ օրենք, ընդունվել է 2014 թվականի հունիսի 21-ին, ՀՕ- 110-Ն
- [ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք](#), ընդունվել է 2011 թվականի նոյեմբերի 28-ին, ՀՕ- 280-Ն
- [ՀՀ Զրային օրենսգիրք](#), ընդունվել է 2002 թվականի հունիսի 4-ին, ՀՕ-373-Ն
- [ՀՀ Հողային օրենսգիրք](#), ընդունվել է 2001 թվականի մայիսի 2-ին, ՀՕ-185
- [«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին»](#) ՀՀ օրենք, ընդունվել է 2006 թվականի նոյեմբերի 27-ին, ՀՕ-211-Ն
- [ՀՀ Անտառային օրենսգիրք](#), ընդունվել է 2005 թվականի հոկտեմբերի 24-ին, ՀՕ- 211-Ն
- [«ՀՀ օրենքը հիդրոոդերևութաբանական գործունեության մասին»](#), ընդունվել է 2001 թվականի փետրվարի 7-ին, ՀՕ-145
- ՀՀ օրենք [«Թափոնների մասին»](#), ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 24-ին, ՀՕ-159-Ն
- [«Բուսական աշխարհի մասին»](#) ՀՀ օրենք, ընդունվել է 1999 թվականի նոյեմբերի 23- ին, ՀՕ-22
- [«Կենդանական աշխարհի մասին»](#) ՀՀ օրենք, ընդունվել է 2000 թվականի ապրիլի 3-ին, ՀՕ-52

- [«Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2005 թվականի մայիսի 3-ին, ՀՕ-96-Ն](#)
- [«ՀՀ Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2006 թվականի նոյեմբերի 27-ին, ՀՕ-232-Ն](#)
- [«Հայաստանի Հանրապետությունում Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2000 թվականի մայիսի 17-ին](#)
- [«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2005 թվականի ապրիլի 4-ին, ՀՕ- 82-Ն](#)
- [Տեսչական մարմինների մասին](#) ՀՀ օրենքը, ընդունվել է 2014 թվականի դեկտեմբերի 17-ին

7.2.2 Կառավարության որոշումներ

- «ՀՀ Կառավարության որոշումը [«Աղքավայրերի մոնիթորինգի իրականացման կարգը սահմանելու մասին»](#), ընդունված է 30.11.2023թ., N 2105-Ն
- «ՀՀ Կառավարության որոշումը [«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2021-2023 թվականների ընթացքում կատարման ենթակա պետական նշանակության հիդրոոդերևութաբանական աշխատանքների ծրագիրը և նախատեսվող միջազգային համագործակցության միջոցառումների ցանկը հաստատելու մասին»](#), ընդունված է 13.05.2021թ., N792-Լա
- ՀՀ Կառավարության որոշումը «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն», «Անտառային մոնիթորինգի կենտրոն» և «Հիդրոոդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ազդող ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով [«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն»](#) պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի հունիսի 20-ի n 552, 2004 թվականի մարտի 18-ի n 349-ն որոշումներում փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին», ընդունված է 30.01.2020թ., որոշում. N81
- «ՀՀ Կառավարության որոշումը [լավագույն հնարավոր տեխնոլոգիաներին ներկայացվող չափորոշիչները սահմանելու մասին»](#), ընդունված է 15.06.2017թ., որոշում. N 666-Ն
- «ՀՀ Կառավարության որոշումը [Ջրային ռեսուրսների պետական կադաստրի վարման կարգը հաստատելու և ՀՀ Կառավարության 2003 թվականի հուլիսի 23-ի N 1060-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»](#), ընդունված է 02.02.2017թ., N 68-Ն

- ՀՀ Կառավարության որոշումը [ՀՀ Շրջակա միջավայրի աղտոտվածության բարձր մակարդակ ունեցող](#) (մասնավորապես՝ հանքավայրերին հարող) տարածքներում մշտադիտարկման կարգը հաստատելու մասին», ընդունված է: 08.07.2015, որոշում N 762-Ն
- «ՀՀ Կառավարության որոշումը [կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին](#)», ընդունված է 27.01.2011թ., որոշում N 75-Ն
- «ՀՀ Կառավարության որոշումը [Ըստ դասակարգման՝ ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության պահանջները սահմանելու մասին](#)», ընդունված է 14.01.2010թ., N 23-Ն
- [Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին](#) ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1110-Ն որոշում
- «ՀՀ Կառավարության որոշումը [Արդիական տեխնոլոգիաների կիրառման, ջրային ռեսուրսների մոնիթորինգի բարելավման և աղտոտման նվազեցման ու կանխման միջոցառումները սահմանելու մասին](#)», ընդունված է 14.01.2010թ., N 118-Ն
- «ՀՀ Կառավարության որոշումը [Միջազգային նշանակության հատուկ պահպանվող ջրային համակարգերի օգտագործման և պահպանության կարգը հաստատելու մասին](#)», ընդունված է 15.09.2005թ., N 1628-Ն
- «ՀՀ Կառավարության որոշումը [ջրային ռեսուրսների մոնիթորինգի իրականացման և հաշվետվությունների գրանցման կարգը հաստատելու մասին](#)», ընդունված է 22.05.2003թ., 639-Ն
- «ՀՀ Կառավարության որոշումը [անդրսահմանային ջրային ռեսուրսների մասին տեղեկատվության տրամադրման կարգը հաստատելու մասին](#)», ընդունված է 08.05.2003թ. N 612-Ն
- [Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին](#) ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 92-Ն որոշում
- [«Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին](#) ՀՀ Վարչապետի 2007 թվականի մարտի 3-ի N 172-Ն որոշում
- [Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկի ներկայացման կարգը սահմանելու մասին](#) ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1291-Ն որոշում
- [ՀՀ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից իրականացվող՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և ՀՀ Կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N 1511-Ն եվ 2012 թվականի նոյեմբերի 22-ի n 1562-Ն](#)

[որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին](#) ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1125-Ն որոշում

- [Ըստ գետային ավազանների Հայաստանի Հանրապետության ջրային հաշվեկշռի տարրերի, ինչպես նաեւ ջրային ռեսուրսների ու պաշարների բաշխումը սահմանելու մասին](#) ՀՀ կառավարության 29 մայիսի 2008 թվականի N 549-Ն որոշում
- [Արարատյան ջրավազանային տարածքի 2016-2021 թվականների կառավարման պլանը և արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին](#) ՀՀ Կառավարության 2016 թվականի N 338-Ն որոշում
- [ՀՀ կառավարության ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին](#)¹⁴ օգոստոսի 2008 թվականի N 967-Ն որոշում
- [Արարատի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին](#) ՀՀ կառավարության 2002 թ.-ի N 65-Ն որոշում
- [Վայոց ձորի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին](#) ՀՀ կառավարության 2003 թ.-ի N 754-Ն որոշում
- [Կոտայքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին](#) ՀՀ կառավարության 2003 թ.-ի N 1793-Ն որոշում
- [ՀՀ Կառավարության Ստորերկրյա քաղցրահամ և թերմալ ջրերի արդյունահանված պաշարների հաշվառման նպատակով ջրահաշվիչ \(ջրաչափիչ\) սարքերի տեղադրման, կնքման եւ շահագործման, ստորերկրյա քաղցրահամ և թերմալ ջրերի արդյունահանված պաշարների ծավալների վերաբերյալ տվյալների արձանագրման կարգերը և ժամկետները սահմանելու մասին](#) 05 հոկտեմբերի 2017 N1252-Ն որոշում:
- [ՀՀ Կառավարության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին](#) 20 ապրիլի 2002 թվականի N 438 որոշում:
- [ՀՀ կառավարության Բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եւ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին](#) հուլիսի 31-ի 2014 թվականի N781-Ն որոշում,
- ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N 71-Ն և «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N 72-Ն որոշումները,
- [ՀՀ կառավարության ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին](#) 2010 թվականի հունվարի 29-ի N 71-Ն որոշում,

- [ՀՀ կառավարության ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին](#) 2010 թվականի հունվարի 29-ի N 72-Ն որոշում:

7.2.3 Գերատեսչական ակտեր

- Հրաման N 26-Ն 27.01.2023թ. Շրջակա միջավայրի նախարարի հրամանը [«Ջրավազանային կառավարման պլանի բովանդակությունը հաստատելու մասին»](#)
- Հրաման N212-Ն 15.06.2021թ. Հայաստանի Հանրապետության մակերևութային և ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետերի ցանկը հաստատելու և Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի ապրիլի 21-ի N 121-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»
- Հրաման N335-Ն 09.09.2020թ. Շրջակա միջավայրի նախարարի հրամանը «Ռեկրեացիոն գոտիներում ջրային ռեսուրսների պահպանության պահանջները սահմանելու մասին»
- Հրաման N125-Լ 24.04.2020թ. «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, սեփականության իրավունքով հանձնվող և անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող գույքի կազմը հաստատելու մասին»
- Հրաման N01-Ն 25.01.2010թ. Առողջապահության նախարարի հրաման «Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին»
- Հրաման N379-Ա 28.11.2006թ. «Հայաստանի Հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածության վիճակի մասին տարեկան ամփոփագրի կազմման կարգը հաստատելու մասին»
- Հրաման N163-Ն 16.02.2006թ. Առողջապահության նախարարի հրաման «Աշխատանքային գոտու օդում և մթնոլորտային օդում հիգիենիկ նորմերը հաստատելու մասին»
- Հրաման N876 25.12.2002թ. Առողջապահության նախարարի հրամանը «Խմելու ջուր: ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: որակի հսկողություն» N 2-III-Ա 2-1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին»:
- Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի «Մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակի վերաբերյալ (լրամշակված)» 2020/2184 հրահանգ

7.2.4 Նորմեր

- Մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերը (ՀՀ կառավարության 2011թ. հունվարի 27-ի N 75-Ն որոշում)
- Ընդհանրացված ցուցանիշներով և բնական ջրերում հաճախ հանդիպող վնասակար քիմիական նյութերի և անտրոպոգեն ծագումով նյութերի թույլատրելի

8. ԲՆԱԿԱՀԱՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԶՐԱՎԱԶԱՆԻ ԶՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Զրավազանի ջրային մարմինների համար բնապահպանական նպատակները ներկայացված են Աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 12. Ռիսկային մակերևութային ջրային մարմինների համար բնապահպանական նպատակներ

#	ԶՄ անվանումը	ԶՄ երկարությոնը, կմ	ՌԶՄ տարանջատման հիմքը	Բնապահպանական նպատակը 2030 թ համար	Բնապահպանական նպատակը 2036թ համար
1	Գողթ գետը ակունքների տարածքից՝ 2578մ նիշից մինչև Կարմիր գետի հետ միախառնվելը՝ 1775մ նիշը (Գեղարդավանքի մոտ)	6.99	Հիդրոէներգետիկ և ոռոգման նպատակով ջրառ էկոլոգիական թողքի խախտում	Հասնել լավ էկոլոգիական կարգավիճակի, ապահովել ջրային մարմնի էկոլոգիական թողքը	Պահպանել լավ էկոլոգիական կարգավիճակը
2	Կարմիր գետը՝ակունքից մինչև Գողթ գետի հետ միախառնվելը	8.54	Ոռոգման նպատակով ջրառ էկոլոգիական թողքի խախտում	Հասնել լավ էկոլոգիական կարգավիճակի, ապահովել ջրային մարմնի էկոլոգիական թողքը	Պահպանել լավ էկոլոգիական կարգավիճակը
3	Գողթ գետը՝ Կարմիր գետի հետ միախառնման վայրից մինչև Գողթ գյուղը	1.64	Ոռոգման նպատակով ջրառ էկոլոգիական թողքի խախտում	Հասնել լավ էկոլոգիական կարգավիճակի, ապահովել ջրային մարմնի էկոլոգիական թողքը	Պահպանել լավ էկոլոգիական կարգավիճակը
4	Գողթ գետը Գողթ գյուղի վերևից մինչև Գառնի գյուղի ներքևը՝ Ազատ գետը թափվելը	6.32	Կոմունալ-կենցաղային կեղտաջրերի ներհոսք	Հասնել լավ քիմիական և էկոլոգիական կարգավիճակի	Պահպանել լավ էկոլոգիական և քիմիական կարգավիճակը
5	Ազատ գետը՝ Գառնի գյուղից (Ազատ և Գողթ գետերի միախառնումից՝ 1234.7մ) մինչև Ազատի ջրամբար	9.48	Ոռոգման նպատակով ջրառ էկոլոգիական թողքի խախտում կոմունալ-կենցաղային կեղտաջրերի ներհոսք	Հասնել լավ քիմիական և էկոլոգիական կարգավիճակի, ապահովել ջրային մարմնի էկոլոգիական թողքը	Պահպանել լավ էկոլոգիական և քիմիական կարգավիճակը
6	Ազատ գետը՝ Ազատի ջրամբարից մինչև Մխչյանի պ/կ-ի հեռացնող ջրանցք	8.35	Ոռոգման նպատակով ջրառ էկոլոգիական թողքի խախտում կոմունալ-կենցաղային կեղտաջրերի ներհոսք	Հասնել լավ քիմիական և էկոլոգիական կարգավիճակի, ապահովել ջրային մարմնի էկոլոգիական թողքը	Պահպանել լավ էկոլոգիական և քիմիական կարգավիճակը
7	Ազատ գետը՝ Մխչյանի պ/կ-ի ջրանցքից մինչև գետաբերան	8.39	Ոռոգման նպատակով ջրառ էկոլոգիական թողքի խախտում	Հասնել լավ քիմիական և էկոլոգիական կարգավիճակի	Պահպանել լավ էկոլոգիական և քիմիական կարգավիճակը

8	Վեդի գետը՝ Խոսրով վտակի միախառնումից 1154.9 մ մինչև Ուրցաձոր գյուղը՝ 1071մ նիշը	5.66	Ոռոգման նպատակով ջրառ էկոլոգիական թողքի խախտում	Հասնել լավ էկոլոգիական կարգավիճակի, ապահովել ջրային մարմնի էկոլոգիական թողքը	Պահպանել լավ էկոլոգիական կարգավիճակը
9	Վեդի գետը՝ Ուրցաձոր գյուղի վերին սահմանից մինչև Վեդի քաղաքի վերևը	8.42	Ջրառ, էկոլոգիական թողքի խախտում կոմունալ-կենցաղային կեղտաջրերի ներհոսք	Հասնել լավ քիմիական և էկոլոգիական կարգավիճակի, ապահովել ջրային մարմնի էկոլոգիական թողքը	Պահպանել լավ էկոլոգիական և քիմիական կարգավիճակը
10	Վեդի գետը՝ Վեդի քաղաքի տարածքում, սկսած Միջագետի սկզբնամասից՝ 912.3 մ նիշից մինչև Արտաշատի ոռոգման ջրանցքի հետ հատվելը՝ 886.9 մ նիշը	3.30	Ջրառ, էկոլոգիական թողքի խախտում կոմունալ-կենցաղային կեղտաջրերի ներհոսք	Հասնել լավ քիմիական և էկոլոգիական կարգավիճակի, ապահովել ջրային մարմնի էկոլոգիական թողքը	Պահպանել լավ էկոլոգիական և քիմիական կարգավիճակը
11	Վեդի գետը՝ Արտաշատի ջրանցքի հատման տեղից՝ 886.9 մ նիշից մինչև Երասխի ջրանցքի հետ հատման տեղը	11.03	Ջրառ, էկոլոգիական թողքի խախտում կոմունալ-կենցաղային կեղտաջրերի ներհոսք	Հասնել լավ քիմիական և էկոլոգիական կարգավիճակի, ապահովել ջրային մարմնի էկոլոգիական թողքը	Պահպանել լավ էկոլոգիական և քիմիական կարգավիճակը
12	Վեդի գետի՝ ստորին հոսանքի շրջանը, սկսած Վեդի գետը Երասխի ջրանցքի հետ հատման տեղից մինչև գետաբերան՝ 806.2մ նիշը	1.33	Ջրառ, էկոլոգիական թողքի խախտում կոմունալ-կենցաղային կեղտաջրերի ներհոսք	Հասնել լավ քիմիական և էկոլոգիական կարգավիճակի, ապահովել ջրային մարմնի էկոլոգիական թողքը	Պահպանել լավ էկոլոգիական և քիմիական կարգավիճակը
13	Արփա գետը՝ Ջերմուկ քաղաքից մինչև Կեչուտի ջրամբար	4.87	Կոմունալ-կենցաղային կեղտաջրերի ներհոսք	Հասնել լավ քիմիական և էկոլոգիական կարգավիճակի	Պահպանել լավ էկոլոգիական և քիմիական կարգավիճակը
14	Հերիեր գետը՝ Հեր-Հեր-1 ՓՀԷԿ-ից մինչև ջրամբար	9.47	Ջրառ, էկոլոգիական թողքի խախտում	Հասնել լավ էկոլոգիական կարգավիճակի, ապահովել ջրային մարմնի էկոլոգիական թողքը	Պահպանել լավ էկոլոգիական կարգավիճակը
15	Արփա գետը՝ Ագատեկ վտակի թափման վայրից (1271.6մ բարձրությունից) մինչև Մալիշկա վտակի թափվելը ներառյալ (Վայք քաղաքի տարածքը)	12.10	Կոմունալ-կենցաղային կեղտաջրերի ներհոսք	Հասնել լավ քիմիական և էկոլոգիական կարգավիճակի	Պահպանել լավ էկոլոգիական և քիմիական կարգավիճակը
16	Արփա գետը՝ Մալիշկա և Գլաձոր վտակների միջև	6.03	Կոմունալ-կենցաղային կեղտաջրերի ներհոսք	Հասնել լավ քիմիական և էկոլոգիական կարգավիճակի	Պահպանել լավ էկոլոգիական և քիմիական կարգավիճակը

17	Արփա գետը՝ Գլաձոր և Եղեգիս վտակների միջև	2.37	Կոմունալ-կենցաղային կեղտաջրերի ներհոսք	Հասնել լավ քիմիական և էկոլոգիական կարգավիճակի	Պահպանել լավ էկոլոգիական և քիմիական կարգավիճակը
18	Եղեգիս գետը՝ Արփա-Սևան թունելի հատման վայրից մինչև գետաբերան	36.62	Հիդրոէներգետիկ և ոռոգման նպատակով ջրառ, էկոլոգիական թողքի խախտում կոմունալ-կենցաղային կեղտաջրերի ներհոսք	Հասնել լավ քիմիական և էկոլոգիական կարգավիճակի, ապահովել ջրային մարմնի էկոլոգիական թողքը	Պահպանել լավ էկոլոգիական և քիմիական կարգավիճակը
19	Արփա գետը՝ Եղեգիս վտակի թափվելու վայրից մինչև ՀՀ սահմանը	17.05	Կոմունալ-կենցաղային կեղտաջրերի ներհոսք	Հասնել լավ քիմիական և էկոլոգիական կարգավիճակի	Պահպանել լավ էկոլոգիական և քիմիական կարգավիճակը

9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ռազմավարական էկոլոգիական գնահատման տեսանկյունից կարևոր գնահատման սկզբունքներ են դիտարկվել ջրավազանային կառավարման տարածքի ինչպես մակերևութային այնպես էլ ստորգետնյա ջրային ռեսուրսների կարգավիճակների և մոնիտորինգային ցանցի առկա վիճակի գնահատումները: Այս համատեքստում մասնավորապես մակերևութային ջրային ռեսուրսների վրա ազդեցության գնահատման տեսանկյունից կարևոր ցուցանիշներ են հանդիսանում ֆիզիկաքիմիական, հիդրոկենսաբանական և հիդրոլոգիական ցուցանիշները, որոնց գնահատման արդյունքների մանրամասները ներկայացված են Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի 2025-2030թթ-երի կառավարման պլանի վերջնական հաշվետվության նախագծի 9-րդ գլխում: Մյուս կարևոր գնահատման սկզբունքը դա Արարատյան ջրավազանային տարածքի ջրային ռեսուրսների վրա կլիմայի փոփոխության ազդեցության գնահատումն է, որի արդյունքները ներկայացված են Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի 2025-2030թթ-երի կառավարման պլանի վերջնական հաշվետվության նախագծի 10-րդ գլխում: Գնահատումների մանրամասները սույն հաշվետվությունում չեն ներկայացվում՝ անհարկի կրկնություններից խուսափելու նպատակով, հատկապես հաշվի առնելով օրենսդրությամբ սահմանված պահանջն առ այն, որ հիմնադրությային փաստաթուղթը (այս դեպքում՝ Ջրավազանային կառավարման պլանը) ներառվում է ՌԷԳ հաշվետվության փաթեթում, ինչը և ապահովված է սույն ՌԷԳ հաշվետվության փաթեթի կազմման գործընթացում:

10. Միջոցառումների ծրագիր

10.1 Հիմնական միջոցառումներ

Ազլումերացիաներում կեղտաջրերի մաքրման կայանների կառուցում

Արարատյան ԶԿՏ-ում առանձնացված են հետևյալ 4 ազլումերացիաները՝ Արտաշատ, Արարատ, Եղեգնաձոր և Զերմուկ:

Արտաշատի, Արարատի և Եղեգնաձորի ազլումերացիաներն առանձնացվել են՝ հիմք ընդունելով տարածքում բացահայտված էական ճնշումները՝ կոմունալ-կենցաղային կեղտաջրերից, սննդի արդյունաբերությունից, պինդ թափոններից:

Արարատյան ԶԿՏ-ի ազլումերացիաները նշված են Աղյուսակ 13-ում:


Աղյուսակ 13. Արարատյան ԶԿՏ-ում ազլումերացիաները

Բնակավայրերը ազլումերացիանե րում	Բնակչության թիվ	Բնակչության թիվը	Մակերես, հա	Բնակչության խտությունը, բնակիչ/հա	Հեռավորությունը առաջարկվող ԿՄԿ- ից, կմ
1. Արարատի ազլումերացիա					
բ. Արարատ	20500	65430	2456	27	4.7
բ. Վեդի	11800				10.5
գ. Ուրցաձոր	3216				13
գ. Վանաշեն	2689				9.8
գ. Այգավան	4499				8
գ. Ոսկեպարի	4843				10.2
գ. Սիսավան	2269				11.7
գ. Արալեզ	2582				11.6
գ. Ավշար	4878				6
գ. Արարատ	8154				3
2. Արտաշատի ազլումերացիա					
բ. Արտաշատ	19134	38691	1505	28	4.4
գ. Բաղրամյան	1833				7.7
գ. Բերքանուշ	1926				7
գ. Դալար	2596				7
գ. Մրգավան	1801				6
գ. Ոսրան	3153				5
գ. Շահումյան	4182				2.2
գ. Տափերական	4066				2.4
3. Եղեգնաձորի ազլումերացիա					
բ. Վայք	5300	22066	1559	14	11.5
բ. Եղեգնաձոր	7000				3.5
գ. Գլաձոր	2460				5.4
գ. Գեղափ	2328				4
գ. Մալիշկա	4978				4.7
4. Զերմուկի ազլումերացիա					
Զերմուկ	3880	4774	455	10	1
Կեչուր	894				3.8

Առաջարկվող 4 ազլումերացիայում ԿՄԿ հնարավոր տեղադիրքը որոշվել է հաշվի առնելով տարածքի ռելիեֆի և կառուցապատման առանձնահատկությունները և հանդիսանում է տրված ազլումերացիայի ամենացածր կետը: Այն տոպոգրաֆիական առումով կապահովի կեղտաջրերի հոսքը դեպի ԿՄԿ ինքնահոս եղանակով:

Արտաշատի ագլոմերացիա. Արտաշատի ագլոմերացիայում միայն Արտաշատ քաղաքում կա կոյուղացանց, որի ընդհանուր երկարությունը կազմում է 67.7 կմ, իսկ կոլեկտորի երկարությունը՝ 14 կմ: Համակարգը ունի վերանորոգման կարիք:


Ագլոմերացիայի մեջ մտնող մնացած բնակավայրերը կոյուղի չունեն: Արտաշատ քաղաքում ԿՄԿ նախկինում չի եղել: Արտաշատի ագլոմերացիայի համար առաջարկվում է կառուցել ԿՄԿ՝ մինչև 10000 մ³/օր նախագծային հզորությամբ՝ Շահումյան գյուղական համայնքից հարավ-արևմուտք (Պատկեր 8):



Պատկեր 8. Արտաշատի ագլոմերացիան և ԿՄԿ-ի տեղադիրքը

Արարատի ագլոմերացիա. Արարատի ագլոմերացիայում կոյուղու ցանցի միջով կեղտաջրերը հեռացվում են միայն Արարատ և Վեդի քաղաքներում: Արարատ քաղաքի կոյուղու ցանցի երկարությունը 23,8 կմ է, իսկ Վեդի քաղաքինը՝ 16,8 կմ: Ագլոմերացիայի մեջ մտնող մնացած բնակավայրերը կոյուղի չունեն:


Արարատ և Վեդի քաղաքներում ԿՄԿ նախկինում չի եղել: Արարատի ագլոմերացիայի համար առաջարկվում է կառուցել ԿՄԿ՝ մինչև 15000 մ³/օր նախագծային հզորությամբ՝ Արարատ քաղաքից հարավ-արևմուտք (Պատկեր 9):



Պատկեր 9. Արարատի ագլոմերացիան և ԿՄԿ-ի տեղադիրքը

Եղեգնաձորի ագլոմերացիա. Եղեգնաձորի ագլոմերացիայում կոյուղու ցանցի միջոցով կեղտաջրերը հեռացվում են Վայք և Եղեգնաձոր քաղաքներում, որի ընդհանուր երկարությունը կազմում է 47,4 կմ: Ագլոմերացիայի մեջ մտնող մնացած բնակավայրերը կոյուղի չունեն: Եղեգնաձոր և Վայք քաղաքներում ԿՄԿ նախկինում չի եղել: Եղեգնաձորի ագլոմերացիայի համար առաջարկվում է կառուցել ԿՄԿ՝ մինչև 5000 մ³ /օր նախագծային հզորությամբ՝ Ագարակաձոր գյուղական համայնքից հարավ-արևմուտք (Պատկեր 10):

Ջերմուկի ագլոմերացիա. Ջերմուկի ագլոմերացիայում կոյուղու ցանցի միջով կեղտաջրերը հեռացվում են միայն Ջերմուկ քաղաքից, որի ընդհանուր երկարությունը կազմում է 10,4 կմ: Ջերմուկ քաղաքում և հարակից Կեչուտ համայնքում մշտական բնակչության թիվը կազմում է 5469, սակայն հաշվի առնելով նաև զբոսաշրջիկների ներկայիս թիվը (մոտ 5000) և այն հանգամանքը, որ համաձայն 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N 1064 որոշմամբ Ջերմուկ քաղաքը հայտարարված է զբոսաշրջային կենտրոն և միջոցառումներ են ձեռնարկվում ավելացնելու զբոսաշրջիկների թիվը՝ առաջարկվում է Ջերմուկ քաղաքի կենցաղային և արդյունաբերական կեղտաջրերի մաքրման համար կառուցել նաև կենսաբանական մաքրման կայան (Պատկեր 11):



Պատկեր 10. Եղեգնաձորի ագլոմերացիան և ԿՄԿ-ի տեղադիրքը



Պատկեր 11. Զերմուկի ազլումերացիան և ԿՄԿ-ի տեղադիրքը

ԿՄԿ-ի կառուցում սահմանված ազդեցությաններից դուրս

Համաձայն Քաղաքային կեղտաջրերի հրահանգի՝ ԿՄԿ-ի շահագործում չի պահանջվում փոքր բնակչություն ունեցող համայնքների համար (500 պ.է.-ից պակաս): Արարատյան ՋԿՏ-ում կան 92 բնակավայրեր, որոնք գերազանցում են այս շեմային արժեքը: Այդ համայնքների համար առաջարկվում է իրականացնել տեխնիկատնտեսական հիմնավորումներ քաղաքային կեղտաջրերի մաքրման կենսունակ այլընտրանքային տարբերակները որոշելու համար (սեպտիկ հորերի կառուցում, կենսաբանական լճակներ, տեղական կեղտաջրերի մաքրման կայաններ և այլն):

Ըստ նախնական փորձագիտական գնահատականի Ազատի գետավազանի Գառնի, Վ. Արտաշատ, Նորաշեն, Դվին և Վ.Դվին համայնքների կոմունալ-կենցաղային կեղտաջրերի մաքրման համար նպատակահարմար է կենսաբանական լճակների կառուցումը:

10.2 Լրացուցիչ միջոցառումներ, այդ թվում ֆինանսավորում չպահանջող

Ջրային կառավարման խնդիրների ազդեցությանն ուղղված միջոցառումները լուծելու համար առաջարկվում են լրացուցիչ միջոցառումներ (Աղյուսակ 14), որոնք հաշվի են առնում Արարատյան ՋԿՏ-ում առկա բոլոր խնդիրները, ճնշման տեսակները:

Աղյուսակ 14. Լրացուցիչ միջոցառումներ

#	Միջոցառման անվանումը	Ենթամիջոցառում	Կատարող/ համակատարող
1.	Ջրի արդյունավետության և պահպանման ծրագրեր	- Խթանել ջրի խնայողության տեխնոլոգիաները և գործելակերպը գյուղատնտեսության, արդյունաբերության և կենցաղային օգտագործման ոլորտում: - Արարատյան ՋԿՏ-ի խմելու ջրի աղբյուրների ձևավորման բոլոր տարածքների մանրամասն որոշման ու բնութագրման համար անհրաժեշտ երկրաբանական և հիդրոերկրաբանական ուսումնասիրությունների իրականացում:	Շրջակա միջավայրի նախարարություն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն
2.	Կլիմայի փոփոխության հարմարվողականության ռազմավարություններ	- Մշակել և իրականացնել ռազմավարություններ ջրային ռեսուրսների վրա կլիմայի փոփոխության ազդեցությունները կառավարելու համար: - Բարձրացնել ջրային ենթակառուցվածքների դիմակայունությունը ծայրահեղ եղանակային իրադարձությունների նկատմամբ:	Շրջակա միջավայրի նախարարություն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

	- Արարատյան ԶԿՏ-ի էկոտոնի բոլոր տարածքների մանրամասն որոշման ու բնութագրման համար անհրաժեշտ հիդրոլոգիական և հիդրոերկրաբանական ուսումնասիրությունների իրականացում: - Արարատյան ԶՏԿ-ի տարածքներում գտնվող ԲՀՊՏ-ների էկոհամակարգերի կլիմայի փոփոխության և անապատացման հնարավոր ազդեցության բացահայտում և դրա հետևանքների մեղմացմանն ուղղված գործողությունների ծրագրի մշակում և իրականացում:	
Կայուն գյուղատնտեսության գործընթացներ	- Խրախուսել կայուն գյուղատնտեսական գործելակերպերի ընդունումը, որոնք նվազեցնում են ջրի օգտագործումը և կանխում աղտոտումը - Խթանել ֆերմերներին հողի և ջրի պահպանման միջոցառումներ իրականացնելու համար - Իրազեկման բարձրացման արշավներ և ֆերմերների համար ուսուցում իրականացնել կայուն գյուղատնտեսական տեխնոլոգիաների վերաբերյալ	Էկոնոմիկայի նախարարություն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Ջրհեղեղների ռիսկի կառավարում	- Մշակել և իրականացնել հեղեղումների ռիսկի կառավարման համալիր պլաններ: - Կառուցել ջրհեղեղներից պաշտպանություն և խթանել բնական ջրհեղեղների կառավարման մեթոդները:	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Ներքին գործերի նախարարություն Շրջակա միջավայրի նախարարություն
Աղտոտման դեմ պայքարի միջոցառումներ	- Ներդնել ավելի խիստ կանոնակարգեր և կիրարկում կետային և ոչ կետային աղբյուրների աղտոտման համար: - Իրականացնել խորը հետազոտություններ, որոնց հիման վրա Արարատյան ԶԿՊ-ի հաջորդ 6-ամյա ցիկլի ընթացքում հնարավորություն կընձեռնի Արարատյան ԶԿՏ-ի համար մշակել նիտրատներից խոցելի տարածքների հայտնաբերման նոր դիտացանց, որի մոնիթորինգային տվյալները կօգնեն հետագայում հայտնաբերել նիտրատներից խոցելի բոլոր տարածքները:	Շրջակա միջավայրի նախարարություն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին
Կանոնակարգերի և քաղաքականության բարելավումներ	- Թարմացնել և ուժեղացնել ջրի որակի, քանակի և էկոհամակարգի պաշտպանության հետ կապված քաղաքականություններն ու կանոնակարգերը: - Ապահովել, որ գետավազանային պլանները համապատասխանեցվեն ջրերի կառավարման ազգային և միջազգային շրջանակներին:	Շրջակա միջավայրի նախարարություն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

	• ԲՀՊՏ-ներում անհրաժեշտ է իրականացնել տվյալների հավաքագրման, համակարգման աշխատանքներ, և ձևավորել կադաստրի վարման տեղեկատվական համակարգ: Պետք է հստակ սահմանվեն և գնահատվեն յուրաքանչյուր ԲՀՊՏ-ին սպառնացող հիմնական վտանգները: Անհրաժեշտ է իրականացնել ԲՀՊՏ-ների բնապահպան ռեժիմի խստացում, անասունների արածեցման կանխում, խոտհունձի սահմանափակում: Իրականացնել միջոցառումներ քայքայված պոպուլացիաների վերականգնման ուղղությամբ: • Անհրաժեշտ է իրականացնել բույսերի և սնկերի աճելավայրի պահպանության կազմակերպում, վտանգված տեսակների պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, համապատասխան ԲՀՊՏ-ի տարածքի ընդլայնում՝ վտանգված տեսակների պահպանումը ավելի խիստ իրականացնելու համար: Արարատյան ԶՏԿ-ի տարածքներում ԲՀՊՏ-ների տարածքից դուրս վտանգված տեսակների պոպուլյացիաների տարածքում, անհրաժեշտության դեպքում, ստեղծել պահպանվող տարածք: • Անհրաժեշտ է ուժեղացնել կապերը ԲՀՊՏ-ների, տարածքային կառավարման և ՏԻՄ-երի ու հողօգտագործողների միջև: ԲՀՊՏ-ներում մասնագիտական ներուժի, ԲՀՊՏ-ներին հարակից համայնքներում հասարակության տեղեկացվածության ԲՀՊՏ-ների խնդիրների, նպատակների, ԲՀՊՏ-ներին առնչվող իրավական ակտերի, բնապահպանական դաստիարակության և կրթվածության մակարդակի բարձրացմամբ հարթել/բացառել որոշումների կայացման ժամանակ խնդիրների ծագումը: • Արարատյան ԶՏԿ-ի տարածքներում գտնվող բնության հուշարձանների հաստատված ցանկի համալրման, պահպանման գոտիների տարածքների ճշգրտման, հողամասերի սահմանազատման և քարտեզագրման աշխատանքների մշակում, իրականացում և կառավարման բարելավում:	
Տնտեսական գործիքներ	• Ներդնել ջրի գնագոյացման մեխանիզմներ, որոնք արտացոլում են ջրի օգտագործման իրական արժեքը և	Շրջակա միջավայրի նախարարություն

	նպաստում են արդյունավետ օգտագործմանը: • Տրամադրել ֆինանսական խթաններ ջրի որակը և պահպանումը բարձրացնող փորձերի համար, ինչպիսիք են կայուն գյուղատնտեսության կամ կանաչ ենթակառուցվածքի նախագծերի սուբսիդիաները	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն
8.	Արհեստական ջրային մարմինների տեխնիկական վիճակի գույքագրում և առկա խնդիրների լուծումների պատրաստում	• Նախնական գնահատում • Կառուցվածքային ամբողջականության գնահատում • Նպատակային լուծումների մշակում Շրջակա միջավայրի նախարարություն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
9.	Ոռոգման ջրի որակի հսկողություն*	• Ոռոգման ջրի որակի մոնիթորինգի համար պատասխանատու կառույցի/մարմնի սահմանում • Ջրանցքներում ոռոգման ջրի մոնիթորինգի համակարգի հիմնում • Ջրանցքներում ջրի որակի պահպանման նպատակով հսկողական մեխանիզմների սահմանում՝ թռչնաբուծարանների, խոզաբուծարանների և այլ գյուղատնտեսական ֆերմաների թափոնների արտահոսքը, ինչպես նաև կենցաղային աղբի արտանետումները նվազեցնելու/վերացնելու համար Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
10.	Հատուկ պահպանվող տարածքներում՝ հոսքի ձևավորման գոտիների պահպանման նպատակով պետական հիդրոլոգիական արգելոցների ստեղծում	• Եղեգիս և Ազատ գետերի հոսքի ձևավորման գոտիների պահպանման նպատակով հիդրոլոգիական արգելոցների հիմնում ՇԱՆ
11.	Հատուկ պահպանվող տարածքներում՝ ջրապահպան գոտիների պահպանության ռեժիմի կարգավորում	• Ջրապահպան գոտիներում շինարարական աշխատանքների կազմակերպման կանոնակարգում • Ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացում ապահովել քաղաքաշինական նորմերի պահպանությունը: ՇԱՆ Քաղաքաշինության կոմիտե
12.	Պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և այլ օբյեկտների պահպանություն	• Համաձայն ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի 438 որոշման 43-րդ կետի՝ հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձիք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին: Պետական լիազոր մարմիններ, հիմնարկություններ, իրավաբանական և ֆիզիկական անձիք:
13.	Տվյալների, գիտելիքների և տեղեկացվածության	• Համապարփակ ջրի տեղեկատվական համակարգ, որը հիմնված է տվյալների ավտոմատ արտահանման վրա՝ Շրջակա միջավայրի նախարարություն

բարելավմանն ուղղված միջոցառումներ	տարածքային մակարդակներում տվյալների հավաքագրման և մշակման լրացուցիչ մեխանիզմներից բաղկացած. • Երկրի դիտարկման (արբանյակային պատկերների) տվյալներ ներառելու հնարավորություն՝ ջրի տվյալների բացերը լրացնելու համար • Համապատասխան անձնակազմի վերապատրաստում տվյալների փոխանակման պորտալը գործարկելու, ինչպես նաև Երկրի դիտման (արբանյակային պատկերների) տվյալների օգտագործման համար տվյալների բացերը լրացնելու և համապարփակ գնահատում իրականացնելու համար, • Ջրային պետական համապատասխան մարմինների տեխնիկական կարողությունների հզորացում, ներառյալ՝ ժամանակակից սարքավորումներով հագեցում՝ ջրի տվյալների պորտալը պահպանելու համար: • Բարելավել ջրային կադաստրային համակարգը. տվյալների ավտոմատ արտահանում, տվյալների հավաքագրում և մշակում տարբեր տարածքային մակարդակներում, GIS մշակում, Երկրի դիտարկման տվյալների օգտագործում՝ տվյալների բացը լրացնելու համար:	
14. Հասարակության իրազեկվածության բարձրացում և ներգրավում	• Տեղական համայնքների, շահագրգիռ կողմերի և ՀԿ-ների ակտիվ մասնակցության խթանում ջրային ռեսուրսների կառավարման որոշումներին • Բնակչության շրջանում կազմակերպել թափոնների ճիշտ կառավարման և ջրավազանային տարածքին առնչվող օրենքների ու իրավական ակտերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման միջոցառումներ՝ ջրային ռեսուրսների պահպանությունն ապահովելու նպատակով: Հայտնում ենք նաև, որ Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի 2025-2030 թթ. կառավարման պլանի համաձայն հետազայում իրականացվելիք աշխատանքների ժամանակ հուշարձանների հնարավոր վնասման դեպքերը բացառելու նպատակով խնդրում ենք օրենքով սահմանված կարգով նախատեսվող աշխատանքների	Շրջակա միջավայրի նախարարություն

	Նախագծերը համաձայնեցնել լիազորված մարմնի հետ:	
--	--	--

11. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

- «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետների կողմից տրամադրված տեղեկատվություն, 2024թ.

Արարատյան ԶԿՏ-ի կառավարման պլանի կազմման ժամանակ հիմք են հանդիսացել ջրային ռեսուրսներին վերաբերվող ՀՀ-ում և Արարատյան ԶԿՏ-ում գործող համայնքների զարգացման ծրագրերը, ռազմավարությունները, հայեցակարգերը, պլանները և այլ ծրագրային փաստաթղթերը:

- ՀՀ վիճակագրական կոմիտե՝

<https://armstat.am/am/?nid=12&thid=env&type=0&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC>

- ՀՀ ՏԿԵՆ Զրային կոմիտե՝ <https://www.scws.am/>

- «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տրամադրած տվյալներ՝ <http://www.armmonitoring.am/#home>

- ՀՀ ՇՄՆ ԶՌԿՎ Զրային ռեսուրսների պետական կադաստր, 2024թ.

- «Հայաստանի ազգային արվեստ», հատոր Ա, 2007թ.

- Լ. Զիլինգարյան, Բ. Մնացականյան, Կ. Աղաբաբյան, Հ. Թոքմաջյան. ՀՀ գետերի և լճերի հիդրոլոգիա, Երևան 2001թ

- Խոյեցյան Ա., Մկրտչյան Ռ., « Անապատացման պատճառահետևանքային կապերը և սկզբունքները Հայաստանի գնահատման տարածաժամանակային Հանրապետությունում », Երևան 2006, 250 էջ:

- Զրային հաշվեկշիռների կիրառման ուղեցուցային փաստաթուղթ՝ ԶՇԴ-ի իրականացմանը նպաստելու համար, 18/05/ 2015: Եվրամիություն, 2015:

- Զրի շրջանակային դիրեկտիվի (2000/60 ԵՀ) իրականացման ընդհանուր ռազմավարություն. Ուղեցույց փաստաթուղթ» թիվ 11. Պլանավորման գործընթացները. Պատրաստված է 2.9 աշխատանքային խմբի կողմից. Պլանավորման գործընթացներ: Լյուքսեմբուրգ Եվրոպայի Հրապարակումների Գրասենյակ, 2003:

- Զրի շրջանակային դիրեկտիվի (2000/60 ԵՀ) իրականացման ընդհանուր ռազմավարություն Ուղեցույց փաստաթուղթ թիվ 21. Զեկույցի ուղեցույց՝ Զրի շրջանակային դիրեկտիվի համաձայն: Լյուքսեմբուրգ. Եվրոպայի հրապարակումների Գրասենյակ, 2009:

- Զրի շրջանակային դիրեկտիվի (2000/60 ԵՀ) իրականացման ընդհանուր ռազմավարություն. Ուղեցույց փաստաթուղթ թիվ 24. Գեոքառնային կառավարումը փոփոխվող կլիմայական պայմաններում: Լյուքսեմբուրգ: Եվրոպայի ակումների Գրասենյակ, 2009:

- Խանջյան Ն, « Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները », Երևան 2004, 64 էջ:
- Հայաստանի գյուղական համայնքների ջրամատակարարման և կոյուղու համակարգերի բարելավման և զարգացման տեխնիկատնտեսական ուսումնասիրություն» Պատրաստվել է CES և «Զրույթ» ՍՊԸ-ի կոնսորցիումի կողմից, 2015:
- Հանքարդյունաբերության Մոնիթորինգի Գործիքակազմ ' Համայնքները պահանջում են պատասխանատու գործունեություն.- Եր.: ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն, 2022.- 74 էջ
- «Естественные и эксплуатационные ресурсы пресных подземных вод Армянской ССР» О.А.Азисян, Ф.М.Карапетян, В.Л.Халатян N 01365, 1976թ.:
- Sum Totals of Exhaustive Livestock Census as of 1st January, 2023, https://armstat.am/file/article/g_kendaniner_01.2023.pdf

12. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ և ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Ջրավազանային կառավարման պլանի մշակումը ենթադրում է օգտագործել մասնակցային մոտեցում, որը միավորում է տարբեր տեսակետներ ունեցող շահառու կողմերին՝ որոշելու, թե ինչպես պետք է իրականացվի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումն ու օգտագործումը:

Այն իրականացվում է շահառու կողմերի հետ հանդիպումների և հասարակական լուծումների ժամանակ ջրային ռեսուրսների խնդիրների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով:

Արարատյան ՋԿՏ-ի պլանի լրամշակման ընթացքում կազմակերպվել է հանրային լուծում:

Հանրային լուծման և խորհրդատվական գործընթացների ընթացքում հավաքվել են հանրային ներկայացուցիչների կողմից տրված ջրային ռեսուրսներին առնչվող հարցերի պատասխանները, առաջարկները և խորհուրդները: Հասարակական լուծման արդյունքում հավաքագրված տեղեկատվությունը՝ առաջարկները և խորհուրդները կնպաստեն ջրավազանային կառավարման պլաններում լրամշակումներ կատարելու, պլանի միջոցառումներ ժամանակացույցը մշակելու ժամանակ:

12.1 Առաջին հանրային լուծումներ

ՀՀ Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի 2025-2030թթ. կառավարման պլանի 1-ին առաջին հանրային լուծումը տեղի է ունեցել Արարատի մարզպետարանում սեպտեմբերի 26-ին: Կառավարման պլանի նախագիծը մշակվում է ՀՀ ջրային օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոգեոլոգաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, Ասիական զարգացման բանկի աջակցությամբ:

Հանրային քննարկման նպատակն էր իրազեկել Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի ջրային ռեսուրսների հետ առնչվող շահագրգիռ կողմերին (պետական և տարածքային մարմիններ, համայնքներ, մասնավոր սեկտոր, հասարակական կազմակերպություններ և այլ շահագրգիռ անձինք) կառավարման պլանի հիմնական դրույթների մասին, ինչպես նաև ներգրավել նրանց փաստաթղթի մշակման գործընթացին, հնարավորություն ընձեռելով ներկայացնել կարծիքներ և առաջարկություններ կառավարման պլանի նախագծի վերաբերյալ:

Քննարկմանը մասնակցում էին Ասիական զարգացման բանկի, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, ՏԿԵՆ Ջրային կոմիտեի, ՀՀ Արարատի մարզպետարանի, «Հիդրոոգեոլոգաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի, Արարատի մարզի համայնքների, ՀԿ-ների, մասնավոր սեկտորի ներկայացուցիչներ, խոշոր հողօգտագործողներ, ջրօգտագործողներ, ձկնաբույծներ, բնակիչներ:

Ասիական զարգացման բանկի ներկայացուցիչ Վարդան Կարապետյանն իր ողջույնի խոսքում ընդգծեց մշակվող փաստաթղթի կարևորությունը՝ ջրային ռեսուրսների ռացիոնալ և արդյունավետ օգտագործման տեսանկյունից: Նա հաստատեց շեշտադրեց բնակչության ակտիվ մասնակցության կարևորությունը՝ նշելով, որ նրանց ներգրավվածությունը հնարավորություն է տալիս վերհանել առկա խնդիրները և դիտարկել առաջնահերթությունները՝ ապահովելով ավելի թիրախավորված և գործնական լուծումներ:

Ողջույնի խոսքով հանդես եկան Արարատի մարզպետարանի Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Սերգեյ Կորակյանը և Ասիական զարգացման բանկի ներկայացուցիչ Վարդան Կարապետյանը: Ողջույնի խոսքերում ընդգծվեց մշակվող փաստաթղթի կարևորությունը՝ ջրային ռեսուրսների ռացիոնալ և արդյունավետ օգտագործման տեսանկյունից և շեշտադրվեց բնակչության ակտիվ ներգրավվածության կարևորությունը, որը հնարավորություն է տալիս վերհանել առկա խնդիրները և դիտարկել առաջնահերթությունները՝ ապահովելով ավելի թիրախավորված և գործնական լուծումներ:

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչները ներկայացրեցին ամփոփ տեղեկատվություն Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի, այդ տարածքն ընդգրկող ջրային ռեսուրսների, ջրային մարմինների տարանջատման, գետերի էկոլոգիական թողքի գնահատման, կլիմայի, ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրային ռեսուրսների պահպանման, ջրապահպան և անօտարելի գոտիների, էկոտոնի տարածքների վերաբերյալ, ինչպես նաև անդրադարձան և մասնակիցների հետ ակտիվորեն քննարկեցին ջրավազանային կառավարման տարածքի ջրային ռեսուրսների վրա ճնշումները և հնարավոր ազդեցությունները:

Ակտիվ քննարկման ընթացքում մասնակիցները բարձրացրեցին մի շարք հարցեր, որոնք հիմնականում վերաբերում էին տարածաշրջանում ոռոգման ջրի սակավությանը և որակին, ջրանցքների խցանմանը, պոչամբարների հնարավոր արտահոսքերին, լճերի էկոհամակարգի պահպանությանը:

Քննարկման մասնակիցներին հնարավորություն է ընձեռնվել նաև գրավոր տարբերակով ներկայացնել մեկնաբանություններ և առաջարկություններ ջրավազանային կառավարման պլանի վերաբերյալ:

Հանրային քննարկումները կնպաստեն լրամշակելու և բարելավելու կառավարման պլանը՝ ի նպաստ Արարատյան ջրավազանային կառավարման տարածքում ջրային ռեսուրսների կայուն օգտագործման:

Հանրային քննարկումներ արդյունքները, առաջարկությունները կարող են համարվել ներկայացուցչական Արարատյան ԶԿՏ-ի համար: Հանրային լուծումները նպատակ ունեն քննարկելու ԶԿՏ-ի ջրային ռեսուրսների վրա ճնշումներ և ազդեցության հիմնական գործոնները, ջրային մարմինների համար էկոլոգիական նպատակներին հասնելու միջոցառումների ծրագիրը:

ՁԾԴ 14-րդ հոդվածի հիման վրա անցկացված հանրային լսման գործընթացն ու արդյունքները ապացուցեցին, որ հասարակության ներգրավումը շատ կարևոր և արդյունավետ ընթացակարգ է, ինչպես ջրավազանի կառավարման պլանավորման համար, այնպես էլ իրականացման փուլերում:

12.2 «ՇՄԱԳ և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով և համապատասխան ենթաօրենսդրական ակտերով նախատեսված հանրային լսումներ

Բացի վերը ներկայացված հանրային լսումն ու խորհրդակցությունները, հանրային լսումներ են նախատեսված նաև «ՇՄԱԳ և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով և համապատասխան ենթաօրենսդրական ակտերով: Մասնավորապես, ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ (ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N 2343-Ն որոշման խմբագրությամբ) ընդհանուր առմամբ սահմանված են երկու հանրային լսումներ, որոնցից միայն 2-րդ հանրային լսումներն են վերաբերում Արարատյան ջրավազանային կառավարման պլանին՝ որպես հիմնադրության փաստաթղթի: Այս լսումները պատշաճ և օրենդրության պահանջներին համապատասխան կազմակերպելու նպատակով գրավոր, պաշտոնական հաղորդակցություն է հաստատվել լիազոր մարմին հանդիսացող Շրջակա միջավայրի նախարարության հետ և ստացվել է համապատասխան պարզաբանում առ այն, որ «ՇՄԱԳ և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով և համապատասխան ենթաօրենսդրական ակտերի համատեքստում, ջրավազանային կառավարման պլանների վերաբերյալ անհրաժեշտ է կազմակերպել միայն մեկ հանրային լսումներ, այն է՝ ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ (ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N 2343-Ն որոշման խմբագրությամբ) սահմանված 2-րդ հանրային լսումները, որոնք կկազմակերպվեն նախաձեռնողի կողմից՝ սույն հաշվետվության և Արարատյան ջրավազանային կառավարման պլանի փորձաքննական գործընթացի շրջանակներում: